



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՇՐԵԲ

«ԿՅԵԿԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՎԵԼՎԱԾ 3 (35). 2015



ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-Ի
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՔԸ
ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՔԵՐԸ



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ

Լույս է տեսնում 2007 թվականից տարին չորս անգամ

3 (35). 2015

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քորանջյան Հ. Ա.

քաղաքական գիտուրյունների դրկուր (Ո.Դ), պրոֆեսոր,
Ո.Դ Ռազմական գիտուրյունների ակադեմիայի ընտրված խորհրդական
անդամ, հայաստանական գիտական գոռու գիտական փորձագետ (ԱՄՆ)
(նախագահ)

Չիլինգարյան Գ. Ա.

(գլխավոր խմբագիր)

Ալեքսանյան Ա. Զ.

Այդինյան Ռ. Ա.

Այվազյան Լ. Գ.

Ապրիխամով Է. Ա.

Ավետիսյան Վ. Ն.

Գամբյան Ա. Մ.

Իսահանյան Մ. Ռ.

Խաչատրյան Տ. Վ.

Ղարամանյան Ա. Բ.

Մարգարյան Վ. Հ.

Մարտիրոսյան Լ. Ա.

Միրզաքանյան Ա. Ռ.

Մուրադյան Կ. Ռ.

Յավանովյան Ա. Կ.

(գլխ. խմբագիր տեղակալ)

Յովյան Ն. Ի.

Նազարյան Ա. Ս.

Շիրիմյան Մ. Ա.

Սեդրակյան Ս. Գ.

Վարդանյան Ա. Գ.

Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

Տոնյան Գ. Է.

ԲՈՎԱՆԴԱԿԱՆ ԹՅԱՅԻՆ ՈՒՆ

ՀՀ ՊՆ ՊԱՀԱ-Ի

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՔՔ

ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հ. Ա. Քորանջյան, ԱՄՆ-ի և Ո.Դ-

առաջատար ուղղային կենտրոնների

հետ համագործակցությամբ ՀՀ ՊՆ Ազ-

գային ուազմավարական հետազոտութ-

յունների ինստիտուտի կերպավորությունը

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հե-

տազութական համալսարանի 5

Ո. Ա. Օհաննյան, Ռազմական կրթութ-

յան համակարգի զարգացումը՝ որպես

ՀՀ պաշտպանական համակարգի արդ-

յունավետության մեծացնան գործոն 11

ՀԻՄՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Բ. Պ. Պողոսյան, Մ. Ա. Ավելիսիյան,

Ա. Հ. Գրիգորյան, Ազգային ուազմավա-

րական հետազոտությունների ինստի-

տուտը՝ որպես ՀՀ ՊՆ Պաշտպանա-

կան ազգային հետազոտական համալ-

սարանի հետազոտական բաղադրիչ 25

Վ. Հ. Մարգարյան, Ա. Վ. Արանիսի-

յան, Ռազմավարական պաշտպանա-

կան-անվտանգային կրթության ազգա-

յին ինստիտուտը՝ որպես ՀՀ ՊՆ Պաշտ-

պանական ազգային հետազոտական

համալսարանի գիտակրթական բա-

ղադրիչ 40

<i>Ա. Կ. Յալանուղյան, Դ. Ս. Չիլինգարյան, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտա- հրատարակչական կենտրոնի առաքելության տեղականը և զար- գացման հեռանկարները</i>	53
<i>S. S. Քոչարյան, U. Գ. Կեդիշյան, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի կազմակերպահիրավա- կան որոշ հարցերի շուրջ</i>	71

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-Ի ՍՏԵՂԾՄԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱԶՈՐԴԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

<i>Հայաստանի Հանրապետության օրենքը զորամասերի և գինվո- րական հաստատությունների կարգավիճակի մասին</i>	77
--	----

<i>Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրաման «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կանոնադրությունը հաստատելու մասին»</i>	86
---	----

<i>Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարա- րության «Պաշտպանական ազգային հետազոտական համալսա- րան» պետական իշխնարկ ստեղծելու մասին</i>	87
---	----

<i>ՀՀ Կրթության և գիտության նախարարի հրաման «ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտութ- յունների ինստիտուտ»-ում ասպիրանտուրա բացելու մասին</i>	89
--	----

<i>ՀՀ ԲՈՀ-ի նախագահի հրաման «Քաղաքական ինստիտուտների և գործընթացների և միջազգային հարաբերությունների 056 մասնագիտական խորհրդի մասին»</i>	90
--	----

<i>ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ստեղծման ճանապարհային քարտեզ</i>	92
<i>ՊԱՀՀ-ի ստեղծումը</i>	100

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-Ի
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՔԸ
ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՔԵՐԸ

**ԱՄՆ-Ի ԵՎ ՈԴ ԱՌԱՋԱՏԱՐ ՈՒՂԵՂԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄՔ
ՀՀ ՊՆ ԱԶԳԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏԻ
ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄԸ ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ**

Հ. Ա. ՔՈՂՋՆՉՅԱՆ, գեներալ-մայոր, քաղաքական գիրուրյունների ղոկարոր (ՈԴ), քաղաքագիրուրյան պրոֆեսոր, Պաշտպանական ազգային համալսարանի հրավիրված առաջավար պրոֆեսոր (ԱՄՆ), ՈԴ Ուսումնական գիրուրյունների ակադեմիայի ընդուլված իսկական անդամ, հակասահարեկչության գծով գիրական փորձագեկ (ԱՄՆ), ՀԱՊԿ-ի գիրավորձագիրական խորհրդի անդամ, ՀՀ ՊՆ ԱռՀՀ-ի պետ



2015 թ. հունիսի 22-ին ՀՀ Ազգային ժողովը երրորդ ընթերցմամբ ընդունեց «Զորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» օրենքը¹: Նրանով իրավական հիմքեր ստեղծվեցին ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (ԱՌՀԻ) ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՊԱՀՀ) կերպարին կողման մի գործընթացի, որի սկիզբը դրվել էր դեռ 2003 թ., և որը, պլանաշափ կերպով իրագործվելով, ներկայում մտտենում է իր տրամարանական ավարտին:

2003 թ. այդ ժամանակ Պաշտպանության նախարար, ներկայումս ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը իմ նախաձեռնությամբ ինձ գործուղեց ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարան՝ ՀՀ անվտանգային քաղաքագիտության ու քաղաքանության ոլորտի մտավոր կենտրոնի առավել նպատակահարմար մողել ընտրելու համար: Հաշվի առնելով մի շարք

¹ Տես «Զորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» ՀՀ 2015 թ. հունիսի 22-ի հմ. ՀՕ-99 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2015, հմ. 46 (1135)):

պարամետրներ և, առաջին հերթին, այն հաճամանքը, որ պաշտպանական-անվտանգային քաղաքականության ու ռազմավարության մշակման և իրագործման ոլորտում առաջնությունն անվերապահորեն պատկանում էր ամերիկացիներին, ես որպես օրինակելի նմուշ ընտրեցի ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կազմակերպվածքը։ Համապատասխան գիտական նախագիծը պաշտպանեցի 2004 թ. ԱՄՆ-ի ՊԱՀ-ի ԱՌՀԻ-ի գիտխորհրդում և, վերադարձնալով Հայրենիք, Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի ընդիանուր դեկանարությամբ ձեռնամուխ եղանակագծի իրագործմանը²։ Մեկնարկման փուլում որպես ֆինանսական հիմք օգտագործվեցին այն միջոցները, որոնք ԱՄՆ-ում ՀՀ ռազմական կցորդ իմ եղած տարիներին (1998–2002 թթ.) ԱՄՆ-ի ու Կանադայի սիյուռքահայերը հանգանակել էին ԱՄՆ-ում գործող «Դրաստանատ Կանայան» կոմիտեի հովանու ներքո կազմակերպվող դրամահավաք-ժողովներում, որտեղ ես Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հանձնարարությամբ հանդես էի գալիս որպես հիմնական գեկուցող և տվյալ գործընթացը ՀՀ-ի կողմից լիազորված համադասող։

Ըստ մտահղացման՝ հայկական ԱՌՀ-ն պետք է լիներ այն գիտակագմակերպական հենքը, որի կերպավոխմանք հետագայում հիմնադրվելու էր ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ը։ Միևնույն ժամանակ, սկզբնական փուլում այն պետք է ծառայեր որպես ԱՄՆ-ի (ՊԱՀ-ի Ազգային ռազմական քոլեջի գիտխորհուրդը), ՈՒ (ՈՒ Նախագահին առընթեր Պետական ծառայության ոռուսաստանյան ակադեմիայի գիտական դեկանարություն) և ՆԱՏՕ-ի (միջազգային անվտանգության գծով խորհրդատվական խումբ) առաջատար անվտանգային մտավոր կենտրոնների հետ մերողաբանական համագործակցությունը համադասող գիտական հաստատություն։ Եվ արդեն 2006 թ. ՀՀ ՊՆ ԱՌՀ-ն պատվով կատարեց իր վրա դրված այդ բարդ խնդիրը՝ հանդես գալով որպես ՀՀ ազգային անվտանգության առաջին ռազմավարության նախագծի միջգերատեսչական մշակման քարտուղարություն³ և օգնելով մշակման գիտական դեկանար հանդիսացող իր պե-

² Տես Հ. Ս. Քորանչյան, Պաշտպանական կրթության բարեփոխմանք՝ ռազմավարական փոփոխությունների կառավարումը Հայաստանում «խելացի ուժի» զարգացման տեսանկյունից: «Աշխատանքային տեսրեր», 2012, հմ. 4:

³ Տես Հայկ Ս. Քորանչյան, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության

տիմ՝ այդ նախագիծը մեթոդաբանության տեսակետից հաջողությամբ փորձարնել Վաշինգտոնի, Մուկվայի ու Բրյուսելի նշված մտավոր կենտրոններում⁴:

ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ն իր գործունեության տարիներին վերածվեց մի գիտահետազոտական կառույցի, որը, ժամանակին արձագանքելով հանրապետության և նրա շորջը ձևավորված անվտանգային միջավայրում ծագող պրոբլեմներին, համապատասխան գիտակիրառական վերլուծություններով կողմնորոշում է պետության ռազմաքաղաքական դեկավարությանը, առաջին հերթին՝ ՀՀ ԶՈՒ-ի Գերագույն գլխավոր հրամանատարին և Պաշտպանության նախարարին, անվտանգության ոլորտում ռազմավարական որոշումների ընդունման ասպարեզում: Միևնույն ժամանակ, Ինստիտուտում գործող անվտանգային քաղաքագիտության գծով ասպիրանտուրան և դրական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդը⁵ հետզհետեւ վերածվեցին տվյալ ոլորտում գիտական որակավորում ունեցող երիտասարդ խոստումնալից կարդերի դարբնոցի, կարդերի, որոնք, իրենց մտավոր ներուժն ու գիտելիքներն ի սայս դնելով ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործին, նպաստում են երկրում քաղաքագիտական միջավայրի ներդաշնակեցմանն ու համասեռացմանը: Դրա շնորհիվ ձևավորվում է նաև մի գիտական հենք, որից կարող է հետագայում սնուցվել ստեղծվելիք համալսարան:

Ներկայումս ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ն, դեկավարվելով ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ու ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի

միջգերատեսչական մշակման մեթոդաբանության մագիստրոսական մագիստրոսական մագային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարավետության համատեքստում»: Ե., 2008, էջ 38:

⁴ Տես «Հարցագրույց Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար, ազգային անվտանգության ռազմավարության նախագծի աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանի հետ»: «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հաստուկ թողարկում, 2007, էջ 9:

⁵ Տես «ՀՀ Պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում գործող՝ ՀՀ ԲՈՂ-Ի 056 «Քաղաքական գիտություններ և միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհուրդ» (<http://www.mil.am/files/056%20Academic%20Board%202013.pdf>):

հրահանգներով ու ցուցումներով և վայելելով նրանց հոգածությունն ու աջակցությունը⁶, հասել է զարգացման այն մակարդակին, երբ հիմնականում բավարարված են ապագա ՊԱՀՀ-ի գիտական և գիտահրատարակչական բաղադրիչներին ներկայացվող պահանջները: ՈՒստի վերջին մեկներկու տարվա ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվում կրթական բաղադրիչի ձևավորման ու զարգացման համար անհրաժեշտ ուսուուրսների ստեղծման հարցերին: Սա հոյց կարևոր խնդիր է, քանի որ համալսարանի գործունեությունը, ըստ նախագծային մտահղացման, պետք է խարսխված լինի երկու հիմնակամ՝ գիտական ու կրթական, բարդադրիչների համադրման շնորհիվ ունկնդիրներին մշտապես բարձացվող գիտելիքի մատուցման նորամուծական գաղափարի վրա: Այն է՝ ՊԱՀՀ-ում պետք է դասավանդեն գիտական հետազոտություններով զրադիր (այսինքն՝ նոր գիտելիք ստեղծող) գիտնականներ: Միևնույն ժամանակ, դասախոսական կազմում ազգային անվտանգության առանձին ոլորտների համար պատասխանատու փորձագետ պաշտոնյաների ներգրավումը ունկնդիրներին հնարավորություն կտա յուրացնելու ոչ միայն գիտելիքը, այլև այն ռազմավարական մակարդակի դեկավարման-կառավարման պրակտիկայում կիրառելու հնորություն: Դրանով իսկ պետության ռազմաքաղական դեկավարության համար կձևավորվի ամենաժամանակակից գիտելիքներով զինված, այդ գիտելիքներն իր գործունեության մեջ արդյունավետ կերպով կիրառելու կարողությամբ օժտված, մեծ մտավոր ներուժ ներկայացնող ռեսուրսային շարակարգ:

Ըստ այդմ՝ ԱՌՀԻ-ում մշակվել են.

- պաշտպանական-անվտանգային տերմինների հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական, ռուսերեն-հայերեն և անգլերեն-հայերեն բառարաններ. առաջինը՝ 3000 տերմին ծավալով⁷, երկրորդը՝ 14000,

⁶ Տես Ա. Ս. Օհանյան, Ռազմական կրթության համակարգի զարգացումը՝ որպես ՀՀ պաշտպանական համակարգի արդյունավետության մեծացման գործոն: «Հայկական բանակ», 2012, հմ. 3:

⁷ Տես Գ. Ս. Չիլինգարյան, Ա. Ե. Սարգսյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն բառարան: Ե., 2012:

- «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ» փորձագիտական մատենաշարը, որի առաջին չորս հատորներն արդեն լույս են տեսել⁸, և որում գետեղված են ու գետեղվելու են ԱՌՀԻ-ի վերլուծաբանների կամ նրանց համադասմաք հայրենական և արտասահմանայան մասնագետների գիտավերլուծական ու գիտակիրառական տարածաշրջանային ու գործառությային մշակումները,
- «Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները» երկիատորյակը⁹, որում գետեղված են ՀՀ-ում իրագործվող պաշտպանական բարեփոխումների՝ ըստ առանձին ոլորտների նախատակները, ընթացքը, խնդիրները լուսաբանող վերլուծական հոդվածները՝ հրապարակված ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ՈԳՀ-ում: Դրանց հեղինակներն են ԶՈՒ-ի կենսագործունեության տվյալ ոլորտի համար պատասխանատունները, փորձագետներ ՊՆ-ից, այլ գերատեսչություններից և գիտամանկավարժական հանրության ներկայացուցիչներ:

Նշված բոլոր հրատարակությունները կոչված են ՀՀ-ում անվտանգային քաղաքագիտության բնագավառում հասկացութատերմինարանական ապարատի մշակմանը, համակարգմանն ու միօրինակացմանը, և անվտանգային հետազոտությունների արևմտյան (ԱՄՆ, ՆԱՏՕ-ի անդամ այլ պետություններ) և արևելյան (ՌԴ, ՀԱՊԿ-ի անդամ այլ պետություններ) մերողաբանությունների իմաստավորմանը և տեղայնացմաք այդ մշակույթների արմատավորմանը, հայկական իրականության մեջ անվտանգային-քաղաքագիտական նոր գիտելիքի ամրագրմանը և ուսուցանման նախատակով ընթեցողին մատուցմանը: Դրա հետ մեկտեղ ԱՌՀԻ-ում մշակվել են ՊԱՀՀ-ի շրջանակներում կազմակերպվելիք դասընթացների հետևյալ ծրագրերը.

- մագիստրոսական կրթական ծրագրեր՝

ա) «Ռազմավարական անվտանգություն» (*Strategic security (SS)*),

⁸ Տես «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ», հ. 1–4: Ե., 2014:

⁹ Տես «Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները», մաս 1, 2: Ե., 2013:

- թ) «Տեղեկատվական տեխնոլոգիաների ռազմավարական կառավարում» (*Strategic Management of Information Technologies*),
- պաշտպանական-անվտանգային համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացմանն ուղղված, միջգերատեսչական ձևաչափով իրականացվող մեկամայա կրթական ծրագիր (լրացուցիչ կրթական ծրագիր):

Դրանց նպատակն է ՀՀ Գերագույն գլխավոր իրամանատարի շուրջ համախմբել դեկավարման ու կառավարման ռազմավարական օղակի կադրերի փորձագիտական ներուժը:

ԱՌՀԻ-ն զգալի գործունեություն է ծավալել նաև միջազգային ասպարեզում: Դրանով լավ նախարյալներ են ստեղծված առաջավոր մտավոր կենտրոնների հետ կապերի հետազա սերտացման համար: Այս առումով հատկապես կարևոր է Երևանում ամենամյա ռազմավարական քաղաքական ֆորումների կազմակերպումը: Դրանց, ՀԱՊԿ-ի ներկայացուցիչներից բացի, մասնակցում են փորձագետներ նաև արևմտյան պետություններից, ինչի շնորհիվ Հայաստանը, ՌԴ-Արևմուտք հարաբերությունների սրման պարագայում, դարձավ երկու կողմերի համար գիտավերլուծական երկխոսության հարթակ՝ ամրապնդելով և բազմազանեցնելով իր անվտանգության միջազգային երաշխիքները:

Այսպիսով՝ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանը, համաձայն դեռ 2003–2004 թթ. մշակված և ՀՀ Պաշտպանության նախարար պարուն Սերժ Սարգսյանի կողմից հավանության արժանացած հեռահար մտահղացման և ԱՄՆ-ի ու ՌԴ առաջատար ուղեղային կենտրոններում գիտական փորձաքննության դրական արդյունքների, պետք է դառնա (և ունի բոլոր նախադրյալները, որպեսզի դառնա) ՀՀ ազգային անվտանգության մտավոր ապահովման «խելացի ուժի» ռազմավարական գործիք:

Ստորև ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի մասնագիտական թիմը ընթերցողի համար լուսաբանում է ՊԱՀՀ-ի գիտակրթական համալիրը՝ առանձին հիմնական քաղադիքների հեռանկարային զարգացման տեսլականներով ու դրանց իրագործման ծրագրերով հանդերձ:

**ՌԱԶՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ
ՉԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ՄԵԾԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ***

Ա. Մ. ՕՀԱՆՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարար

Հայաստանի Հանրապետության գարգացման արդի փուլի առանձնահատկությունն այն է, որ տեղի են ունենում հասարակական կյանքի բոլոր ոլորտների և պետական համակարգի, այդ թվում՝ նրա ռազմական կազմակերպվածքի ու կրթական համակարգի, լայնամասշտար բարեփոխումները։ Թեև այդ բարեփոխումների բովանդակությունը, փուլերը, ձևերը և իրազրուցման ժամկետները տարբեր են, այնուամենայնիվ, դրանց գլխավոր նպատակները օրյեկտիվորեն փոխկապված են։ Ռազմական համակարգի կատարելագործման նպատակն է աճբողջ պաշտպանական համակարգի նոր որակական պարամետրների ձևավորումը և երկրի անվտանգության երաշխափորփած ապահովումը։ Կրթական համակարգի բարեփոխումը ծառայում է մարդկանց կրթական մակարդակի բարձրացման, ներդաշնակորեն զարգացած, սոցիալապես ակտիվ, ստեղծագործ անձնավորության ձևավորման նպատակներին, ինչը, ռազմական ոլորտի նկատմամբ կիրառված, նշանակում է հայրենիքի պաշտպանների պրոֆեսիոնալ պատրաստության որակապես նոր մակարդակի ապահովում։



Վերջին երկու տասնամյակներում աշխարհում տեղի ունեցած ռազմատեխնոլոգիական հեղափոխության, գիտատար սպառազինության և ռազմական տեխնիկայի ի հայտ գալու հետևանքով ռազմական արվեստի (ռազմավարական ու օպերատիվ-մարտավարական) և ընդհանրապես այստերազմների նկատմամբ նոր մոտեցումների մշակման շնորհիվ զինված

* Նախագծի գիտական նեկավարությունը սույն մենագրական աշխատությունում նպատակահարմար է գտել զետեղել ՊԱՀՀ-ի խորհրդի նախագահ, Պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանի հորդածը՝ նվիրված ռազմակրթական համակարգի ընդհանուր բարեփոխումներին (տպագրվել է ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի 2012 թ. 3-րդ համարում):

ուժերի մարտունակության գնահատման ժամանակ սկսեցին գերակա դեր խաղալ որակական չափանիշները։ Առաջին այլան մղվեցին, մի կողմից, գերճգրիտ սպառազինությամբ և ուզմական տեխնիկայով հագեցվածության, մյուս կողմից՝ նաևնազիտացած արիեստավարժ անձնակազմով ապահովման հարցերը։ Ընդ որում, անձնակազմի մասնագիտացմանը ներկայացվող պահանջների կտրուկ խստացման հետևանքով միայն վարժանքն ու պատրաստումը այլևս բավարար չեն, և ի հայտ է օալիս մասնագիտական կրթություն ստանալու անհրաժեշտություն։ Ուստի պատահական չէ, որ այսությունների՝ ուզմարվեստի ժամանակակից տեսության վրա հիմնվող զինված ուժերում ուզմական կրթության և ընդհանրապես անձնակազմի կառավարման ոլորտը համարվում է պաշտպանական համակարգի արդյունավետության և ԶՈՒ-ի մարտունակության ապահովման առաջնային գործոն։

Ինչպես ասել է մեծերից Մելը. «Սիգուցե մենք չկարողանանք մեր երեխաների համար ապագա կերտել, բայց առնվազն կարող ենք նրանց նախապատրաստել ապագային»¹: Փորձը ցույց է տալիս, որ բազմակողմ կրթություն ստացած հրամանատարները բարդ իրավիճակներում ավելի արդյունավետ որոշումներ են կայացնում և ավելի արագ են կողմնորոշվում, բան այն հրամանատարները, որոնք թեև ուսուցանված են, բայց ոչ բավարար չափով կրթված։ Այստեղ արժե կրթությունը (*образование, education*) տարբերակել ուսուցանումից (*обучение, training*): Եթե կրթությունը մարդուն որպես կանոն հիմնարար, այդ թվում՝ բազային մասնագիտական, գիտելիքների փոխանցումն է, վերլուծական մտածողության ձևավորումը՝ նրա հիշողության մեջ տարբեր բնագավառներից փաստերի ամրագրմանը և այդ փաստերի միջև առնչությունների որոշակի համակարգի ձևավորմանը, այսինքն՝ նրա նախապատրաստումը անհայտ իրավիճակներում գործելուն, և դրա համար է բազմաթիվ առարկաների ուսուցումը, ապա ուսուցանումը նպատակատդրված է վարքի կոնկրետ, դինամիկական բնույթի հմտությունների, ալգորիթմների ձևավորմանը՝ նրա հիշողության մեջ «երե-ապա» տրամաբանական սիենաների ամրագրմանը և գործողությունների կատարման ավտոմատացմանը, այսինքն՝ անհատի նախապատրաստումն է հայտնի իրավիճակներում գործելուն, ուստի և բավարար չէ լիարժեք մասնագետ, կայացած գործիչ ու հրամանատար

¹ Franklin D. Roosevelt. Quotes (http://www.goodreads.com/author/quotes/219075.Franklin_D_Roosevelt).

պատրաստելու համար: Պատահական չէ, որ ժամանակակից մանկավարժության մեջ ընդունված է, որ կրթական ֆունկցիայի իրացման վերջնական արդյունքը գիտելիքի գործունությունն է, որն արտահայտվում է դրանցով գիտակցված գործառության, նոր գիտելիքներ ստանալու համար նախկին գիտելիքները մորիլիզացնելու կարողության ձևով, ինչպես նաև թե՝ մասնագիտական (տվյալ առարկայից), թե՝ հանրակրթական առավել կարևոր կարողությունների և հմտությունների ձևավորվածությունը²: Իրականում, մի կողմից, կրթության և ուսուցանման արդյունավետ համարումն է, իսկ մյուս կողմից՝ աճանակազմի պաշտոնեական առաջնադաշտացման արդար ու թափանցիկ կառավարումը, որոնք գինված ուժերի համար կապահովեն գերազանց արդյունավետություն, լինի դա մարտի դաշտում, թե խաղաղ պայմաններում: Ուստի ուսմանգիտության մեջ հայտնագործություն արած չենք լինի, եթե ԶՈՒ-ի մարտունակությունն սկսենք չափել ուսուրսի, առաջին հերթին՝ մարդկային ուսուրսի որակական գործակիցներով:

Այս առումով ուշագրավ են ԱՍՆ-ում գինծառայողների դաստիարակության պայմաններին ու համակարգին ներկայացվող հիմնական պահանջները, որոնք են՝ համակողմանությունը, համակարգվածությունը, տրամաբանականությունը, իրապաշտությունը, արդյունավետությունը, ինչպես նաև մտահղացման, պայմանների, նապատակի, խնդիրների և հնարավորությունների միասնականությունը: Այդ երկրում սպայակազմի դաստիարակության առանձնահատկություններն են՝ խելքի, կաճքի, մարմնի մշտական մարզումը, մեծ ուշադրությունը ֆիզիկական պատրաստման նկատմամբ և նրա նշանակալից դերը բոլոր կատեգորիաների գինծառայողների ծառայողական գործունեության մեջ, երկրի ԶՈՒ-ում ծառայության բարձր վարկանիշը, և այլն: Դաստիարակության բովանդակության մեջ ամերիկյան մասնագետներն առանձնացնում են՝ գինծառայողների բարձր ուսմանականագիտական որակների ձևավորումն ու զարգացումը, հայրենասիրության դաստիարակումը, գինծառայության նկատմամբ դրական շարժառիթավորման ձևավորումն ու զարգացումը, բարոյավարքային դաստիարակությունը, գերիակայունության (*пленоустойчивость*) դաստիարակությունը, առողջ կենսակերպի կազմակերպումը, ֆիզիկական դաստիարակությունը³:

² Տես *В. Сластенин, И. Исаев и др.* Педагогика (http://www.gumer.info/bibliotek_Buks/Pedagog/slast/12.php):

³ Տես *В. Уткин.* Особенности воспитательной работы в ВС США, Великобритании и Франции. «Зарубежное военное обозрение», 2001, № 11:

ՈԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԿԱՅԱՑՈՒՄԸ

ՀՀ Զինված ուժերի կազմավորումը համընկավ Հայաստանի համար բավականին ծանր ժամանակահատվածի հետ: Աղբեջանի ճեղուարկած ուսումնական ազրեսիայի, շարունակվող շրջափակման և դրա հետևանքով առաջացած պարենային ճգնաժամի ու ռեսուրսների անբավարարության պայմաններում բանակի ստեղծումը և ՀՀ ու ԼՂՀ բնակչության անվտանգության ապահովումը օրվա հարց էր⁴: Այդ բարդ իրավիճակում ՀՀ Զինված ուժերը լիովին կատարեցին պետության քաղաքական դեկազրության կողմից առաջադրված խնդիրները, սակայն այս ամենի հետևանքով մեր բանակը ձեռք բերեց որոշ առանձնահատկություններ, որոնցով տարբերվում էր աշխարհի շատ բանակներից: Այդ առանձնահատկություններից էր այն, որ բանակի շարքերը համարելու հրատապության պատճառով ինչպես ավագ, այնպես էլ կրտսեր հրամանատարական պաշտոնները մեծ մասամբ համարվեցին հայրենասեր, մարտունակ, սակայն ռազմական կրթություն չունեցող անձնակազմով: Առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ ԽՍՀՄ կազմում եղած տարիներին Հայաստանը միութենական հանրապետություններից միակն էր, որն իր տարածքում չուներ որևէ ռազմակրթական հաստատություններ: Բացի այդ, նախկին ԽՍՀՄ բանակի մարտավարությունն ու ռազմավարությունը ոչ ամբողջությամբ էին համապատասխանում Հայաստանի Հանրապետության ռազմական, այդ թվում՝ ռազմակրթական, կարիքներին ու հնարավորություններին:

1994 թ. մայիսի 5-ի հրադադարի հաստատումից անմիջապես հետո սկսվեցին ՀՀ Զինված ուժերը պրոֆեսիոնալ անձնակազմով համարելուն ուղղված աշխատանքները: Մասնավորապես՝ ԵՊՀ ռազմագիտական ամբիոնի հենքի վրա կազմավորվեց ՀՀ ՊՆ բարձրագույն գինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարանը⁵: Նորաստեղծ բանակի

⁴ Այս սպառնալիքները շարունակում են արդիական մնալ մինչ օրս (տես ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի «ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» հմ. ՆՀ-37-Ն հրամանագիրը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2007, հմ. 11 (535)) և ՀՀ Նախագահի 2007 թ. դեկտեմբերի 25-ի «ՀՀ ռազմական դրկորին հաստատելու մասին» հմ. ՆՀ-308-Ն հրամանագիրը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008, հմ. 1 (591))):

⁵ Տես ՀՀ Կառավարության 1994 թ. հունիսի 24-ի «ՀՀ պաշտպանության նախարա-

խնդիրներից ելնելով՝ ուսումնարանն սկզբնական շրջանում գինվորական մասնագետներ էր պատրաստում 8 մասնագիտությունների գծով: Դրա հետ մեկտեղ ուսումնարանի բազայի վրա անցկացվում էին մեկամյա դասընթացներ, որտեղ ընդունվում էին ՀՀ բուհերն ավարտած քաղաքացիներ:

Չուգահեռաբար ՀՀ ՊՆ միջնորդությամբ ստեղծվեց Ռազմավիճակին թոշքատեխնիկական ուսումնարանը⁶, իսկ ԶՈՒ-ն որակյալ ռազմաթշկական անձնակազմով համալրելու նպատակով Երևանի պետական թշկական համալսարանում գործող բուժծառայության կազմակերպման և էքստրեմալ թշկության ամբիոնի հիմքի վրա ստեղծվեց Ռազմաթշկական ֆակուլտետը⁷:

Մեծ ուշադրություն դարձվեց նաև նախազորակոչային կրթության համակարգի զարգացմանը, քանի որ այն պետք է դառնար անձնակազմի պլանավորման, հավաքագրման և ընտրության ապագա համակարգի առաջին փուլի կարևոր քաղաքիչներից մեկը: Այդ նպատակով ՀՀ լուսավորության նախարարության ռազմամարզական վարժարան-ուսումնարան համալիրին 1994 թ. տրվեց ուսումնական գորամասի կարգավիճակ⁸:

Այսպիսով՝ ՀՀ ԶՈՒ-ի կազմավորման արդեն սկզբնական շրջանում անհրաժեշտ հիմք ձևավորվեց բարձրագույն ռազմական կրթության զարգացման համար: Այդ հիմքի վրա ընդամենը մի քանի տարվա ընթացքում ձևավորվեց ՀՀ ռազմական բուհերի համակարգը: Մասնավորապես՝ ՀՀ

բության Բազմաբնույթ ռազմական հրամանատարական ուսումնարան ստեղծելու մասին» հմ. 279 որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5475>):

⁶ Տես ՀՀ Կառավարության 1994 թ. սեպտեմբերի 20-ի «ՀՀ պաշտպանության նախարարության Ռազմաօրային ուժերի թոշքատեխնիկական ռազմասավահային ուսումնարանի կարգավիճակի մասին» հմ. 447 որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5525>):

⁷ Տես ՀՀ Կառավարության 1994 թ. մայիսի 19-ի «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների՝ պահեստագորի սպաների ծրագրով ռազմական պատրաստության հիմնադրույթները և այդ բուհերի ցանկը հաստատելու մասին» հմ. 232 որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5467>):

⁸ Տես ՀՀ Կառավարության 1993 թ. նոյեմբերի 15-ի «ՀՀ լուսավորության նախարարության ռազմամարզական գիշերօրիկ վարժարանի հիմն վրա ռազմամարզական վարժարան-ուսումնարան համալիր ստեղծելու մասին» հմ. 569 որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5353>) և ՀՀ Պաշտպանության նախարարի 1994 թ. մարտի 14-ի «Ռազմամարզական վարժարան-ուսումնարան ստեղծելու մասին» հմ. 59 հրամանը:

ՊՆ բարձրագույն զինվորական բազմաբնույթ ուսումնարանը վերակազմավորվեց Ռազմական ինստիտուտի⁹, իսկ Ռազմավավիացիոն թղթաշրթի նիկական ուսումնարանը՝ Ռազմավավիացիոն ինստիտուտի: Միևնույն ժամանակ, ՀՀ-ի և ՌԴ-ի միջև 1997 թ. «Քարեկամուրյան, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագրի ստորագրումից հետո հնարավորություն ստեղծվեց ՀՀ ռազմական ուսումնական հաստատություններում չդասավանդվող մասնագիտություններով ՀՀ ԶՈՒ-ի կուրսանունների կրթությունն իրականացնել ՌԴ ռազմաւումնական հաստատություններում: 1998 թ. ստորագրված «Հռոմատանի Համբավետության ԱՊՆ և ՀՀ ՊՆ միջև ռազմական ուսումնական հաստատություններում ՀՀ քաղաքացիների ուսուցման կարգի և պայմանների մասին» համաձայնագրի հիման վրա հայ կուրսանուններն սկսեցին կրթություն ստանալ նաև այդ երկրում: Արտերկրյա կրթությունը կոչված էր ոչ միայն լրացնելու բացը, այլև մեծացնելու ՀՀ-ում ռազմական կրթության համակարգի զարգացման հնարավորությունները:

2000-ական թվականների սկզբին ՀՀ-ում արդեն ձևավորվել էր ռազմական կրթության մի համակարգ, որը հնարավորություն էր տալիս նախագորակոչային տարիքի պատաճներից ընտրելու և պատրաստելու ռազմական գործի ապագա մասնագետների: Այժմ տվյալ ուղղությամբ տարվող աշխատանքները գտնվում են բարեփոխումների փուլում¹⁰:

Այս ժամանակաշրջանում կարևոր աշխատանքներ կատարվեցին զինվորական անձնակազմի ծառայողական առաջխաղացման, ծառայության տևողության, որակավորման և ընդհանրապես կադրային կառավարման հարցերի համակողմանի վերանայման ու դրանց իրավական ձևակերպման ուղղությամբ: 2002 թ. զինվորական ծառայություն անցնելու և անձնակազմի կառավարման հետ կապված խնդիրները հանվեցին «Զինա-

⁹ Տես ՀՀ Կառավարության 1998 թ. հունվարի 16-ի «ՀՀ Պաշտպանության նախարարության Բազմաբնույթ ռազմական հրամանատարական ուսումնարանը ՀՀ Պաշտպանության նախարարության Ռազմական ինստիտուտի վերակազմավորելու մասին» հմ. 24 որոշումը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=6431>):

¹⁰ Տես ՀՀ Պաշտպանության նախարարի 2011 թ. նոյեմբերի 10-ի հմ. 1356-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. նոյեմբերի 9-ի հմ. 1222-Ն «ՀՀ հիմնական, սպառ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում տվյալությունների նախագրակոչային պատրաստության կանոնադրությունը հաստատելու մասին» համատեղ հրամանը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=73753>):

պարտության մասին» ՀՀ օրենքից և ամրագրվեցին առանձին օրենքով¹¹: Նոր օրենքով սպայական կազմի ծառայողական առաջխաղացման համար որպես պարտադիր նախապայման սահմանվեց որակավորում անցնելը, ընդումին որակավորման պահանջներին գիտելիքների համապատասխանեցումն ապահովվում էր վերապատրաստման միջոցով:

Միևնույն ժամանակ, չնայած կատարված զգալի աշխատանքին, ուազմական կրթության համակարգը դեռ հեռու էր ավարտուն լինելուց: Մասնավորապես՝ ԶՈՒ-ի պահանջարկը բավարարելու համար տարեցտարի ընդլայնվում էր կրթությունն արտերկրում՝ ընդգրկելով ավելի մեծ թվով երկրների ուազմանումնական հաստատությունները: Դա թեև օգտակար էր փորձի փոխանակման և մի շարք մասնագիտությունների զարգացման տեսանկյունից, սակայն առաջ էր բերել նաև զգալի կախվածություն, որն առավել ակնհայտ էր ավագ սպայակազմի պատրաստման բնագավառում, քանի որ ՀՀ-ում չկային ավագ սպաների համար նախատեսված կրթահամալիրներ:

Դրա հետ մեկտեղ ՀՀ ուազմակրթական շափորոշիչները շարունակում էին կրել նախկին ԽՍՀՄ-ում գործող շափորոշիչների շեշտված ազդեցությունը: Կրթական հաստատություններում գիտական և հետազոտական աշխատանքների մասնաբաժննը փոքր էր և չէր կարող բավարար լինել ուազմական կրթության ոլորտում զգալի որակական առաջընթաց ապահովելու համար: Իրավիճակը բարդանում էր նաև այն պատճառով, որ ուազմական կրթության ոլորտը դրւում էր մնացել ուազմարվեստի ընդհանուր վերանայման գործընթացներից, որոնք իրականացվում էին հիմնականում ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր շտաբում:

Անցած ժամանակաշրջանում ՀՀ Զինված ուժերը մեծ զարգացում ապրեցին՝ վերածվելով բազմաճյուղ և պետական կառավարման տարբեր ոլորտներում կարևոր դերակատարություն ունեցող պաշտպանական կառույցի¹²: Վերագնահատվեցին մարտահրավերները, ավելացան պաշտպանական համակարգի վրա դրված խնդիրները, Զինված ուժերն ավելի մեծ դեր ստանձնեցին ինչպես բնական ու տեխնիկական աղետների ժամանակ քաղաքացիական բնակչությանը օգնության ցուցաբերման

¹¹ Տես «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ 2002 թ. հուլիսի 3-ի հմ. ՀՕ-380-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2002, հմ. 26(201)):

¹² Տես «Պաշտպանության ուազմավարական վերանայում 2011–2015» (հանրային օգտագործման համար) (<http://www.mil.am/files/SDR-Arm.pdf>):

գործում, այնպես էլ ահաբեկչության դեմ պայքարում, բնակչության և, հատկապես՝ երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակության, տեղեկատվական հակապայքարի, ռազմական արդյունաբերության և մի շարք այլ ոլորտներում, ՀՀ պաշտպանական համակարգում ներդրվեց քաղաքացիական հաստոկ ծառայությունը¹³: Այդ ամենը լավ հիմք էր ՀՀ պաշտպանական համակարգի հետագա պլանավորված զարգացման համար:

ՊԱԾՏՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ինչպես Գիտելիքի օրվա առթիվ իր ուղերձում նշել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, «Հայաստանը կարող է լինել միայն կրթված: Այլ Հայաստան պարզապես չի կարող գոյություն ունենալ»¹⁴: Այս խոսքերն ամբողջությամբ վերաբերում են նաև պաշտպանական ոլորտին:

ՀՀ պաշտպանական կրթության համակարգը ներկայում գտնվում է ակտիվ զարգացման գործնքացում: Արդեն երկու տարի է, ինչ ռազմական կրթության զարգացումն ընդգրկված է ՀՀ Կառավարության գերակա խնդիրների շարքում¹⁵: Այս ոլորտում ապագա 2–5 տարիների համար նախանշված բարեփոխումները համակարգելու նպատակով մշակվեցին և 2012 թ. մարտի 14-ին ՀՀ Կառավարության կողմից հաստատվեցին «ՀՀ ռազմական կրթության հայեցակարգը», ինչպես նաև դրան կից «Սպայական կազմի պատրաստության փուլերի ճանապարհային քարտեզն» ու «Հայեցակարգի ապահովման միջոցառումների ծրագիրը»¹⁶: «Հայեցա-

¹³ Տես «Քաղաքացիական հաստոկ ծառայության մասին» ՀՀ 2007 թ. նոյեմբերի 28-ի հմ. ՀՕ-286-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2007, հմ. 66(590)):

¹⁴ «ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա առթիվ», 01.09.2012, ՀՀ Նախագահի պաշտոնական կայք (<http://www.president.am/hy/congratulatory/item/2012/09/01/president-Serzh-Sargsyan-congratulationknowledge/>):

¹⁵ Տես ՀՀ Կառավարության 2011 թ. հունվարի 13-ի «ՀՀ Կառավարության 2011 թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» հմ. 111-Ն որոշումը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2011, հմ. 12(815)) և ՀՀ Կառավարության 2012 թ. օգոստոսի 9-ի «ՀՀ Կառավարության 2012 թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» հմ. 1055-Ն որոշումը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2012, հմ. 42(916)):

¹⁶ Տես ՀՀ Կառավարության 2012 թ. մարտի 7-ի նիստի «ՀՀ ռազմական կրթության հայեցակարգը և սպայական կազմի պատրաստության փուլերի ճանապարհային քար-

կարգով» սահմանվում է, որ բարեփոխված ռազմակրթական համակարգը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

– համապատասխանություն ՀՀ պետական կրթական չափորոշիչների պահանջներին,

– համապատասխանություն միջազգային չափորոշիչներին և ունակություն՝ լիարժեք կերպով ինտեղվելու Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին՝ Բոլոնիայի գործընթացում ՀՀ ներգրավվածության շրջանակներում,

– կրթության փուլայնություն և շարունակականություն՝ եռաստիճանությամբ հանդերձ,

– միջազգային առաջավոր փորձը հաշվի առնող, ճկուն և գիտության նոր նվաճումները ներառող,

– սպայական ու ենթասպայական կազմերի պաշտոնեական առաջխաղացման փուլերին և ընթացակարգերին համահունչ,

– որակապես նոր դասախոսական կազմ ունեցող,

– անձնակազմի կրթության շարունակականությունն ապահովող:

Ներկայումս կատարվում են ակտիվ աշխատանքներ «Հայեցակարգի» դրույթների իրազործման ուղղությամբ: Մասնավորապես՝ վերանայվել են 2004 թ. հունվարի 27-ից գործող Սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոնի (ՄԿՈԲԿ) ուսումնակրթական ծրագրերը, ստեղծվել է մայորների պատրաստման համար «մայոր» գինվորական կոչումով սպայական վերապատրաստման դասընթաց: ՀՀ ՊՆ-ի կողմից մշակվել ու ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ աշխատանքային կարգով համաձայնեցվել են «Բարձրագույն ռազմական կրթության ռազմական կառավարման մագիստրոսի որակավորման պետական կրթական չափորոշիչները», վերանայման փուլում են «Բարձրագույն ռազմական կրթության բակալավրի որակավորման պետական կրթական չափորոշիչները»: Առաջարկություններ են պատրաստվել 2007 թ. օգոստոսի 30-ի «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և ՀՀ Կառավարության 2005 թ. նոյեմբերի 9-ի հմ. 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության հմ. 1038-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Ըստ այդմ՝ ՀՀ

տեղը հաստատելու մասին» հմ. 9–18 արձանագրային որոշումները (<https://www.e-gov.am/protocols/item/135/>):

ուազմակրթական համակարգը կիամապատասխանեցվի ազգային և միջազգային չափանիշներին՝ դառնալով եռաստիճան:

Նախատեսվում է 2013 թ. գործարկել ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ուազմական ինստիտուտի հենքի վրա ձևավորվող ավագ սպայական հրամանատարաշտարային դասընթացները, որոնք հաստատուն հիմքեր են ստեղծում 2015 թ. ՀՀ ՊՆ հրամանատարաշտարային բարձրագույն ուսումնական հաստատության կայացման համար: Այս ուղղությամբ արդեն մշակվել են հիմնական կրթական ծրագրին ներկայացվող պահանջները, սահմանվել են կրթարաժինները, ուսուցանվող առարկաներին հատկացվող ժամաքանակները և կրթարաժինների տոկոսաչափը:

Այն հանգամանքի հաշվառմամբ, որ առաջատար պետությունների ԶՈՒ-ի մարտունակության ապահովման կարելո գործուներից է արհեստավարժ սերժանտական կազմը, մենք ձեռնամուխ ենք եղել ՀՀ ԶՈՒ-ում նման հաստատության հիմնադրման գործին: Մասնավորապես՝ սերժանտական կազմը հանվել է շարքային կազմից և որպես կրտսեր բաղադրիչ մտցվել ենթասպայական կազմի մեջ¹⁷: Ըստ այդմ՝ աշխատանքներ են տարվել պրոֆեսիոնալ ենթասպայական կազմի կրթությունը որպես միջնակարգ նասնագիտական կրթություն կայացնելու ուղղությամբ: Այսպես. 2012 թ. հուլիսին մեկնարկեցին նորացված ծրագրով դասակի հրամանատարների տեղակալների դասընթացները, որտեղ դասախոսություններ են կարդացել նաև օտարերկրյա սերժանտ-հրահանգինները:

Էապես ընդլայնվել է ՀՀ ՌԱԴՀ-երի միջազգային համագործակցության դաշտը, հատկապես՝ զիտամանկավարժական, մեթոդաբանական, նյութատեխնիկական աջակցության բնագավառներում: Այսպես. ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ուազմական ինստիտուտի կազմում գործող ՍԿՈՐԿ-ում դասախոսություններ են կարդացել ԱՍԽ-ից, Բուլղարիայից, Լեհաստանից, Ռումինիայից, Չեխիայից հրավիրված դասախոսներ: 2012 թ. հունիսի 12–14-ը ՀՀ պաշտպանության նախարարությունը հյուրներել է Անվտանգության և պաշտպանության ակադեմիաների ԳՀԽ կոնսորցիումի կրթական հարցերով աշխատանքային հմբի ամառային նստաշրջանը¹⁸: Միջազգային համագործակցության շրջանակներում իրականաց-

¹⁷ Տես ««Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2012 թ. մարտի 20-ի հմ. ՀՕ-92-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2012, հմ. 18(894)):

¹⁸ Տես «Ավարտվել են «Նոր ուսանողներ, նոր մեթոդներ և նոր գնահատականներ»

Վել են ՀՀ ռազմակրթական հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, համագործակցելով ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի և Հարվարդի համալսարանի հետ, զգալի նախապատրաստական աշխատանք է կատարել ԱՌՀ-ն Պաշտպանական ազգային համալսարանի կերպահոխելու ուղղությամբ: Ապագա համալսարանի գործարկումը կապահովվի ռազմավարական մակարդակում աշխատող և պետական կառավարման գործընթացներում ընդգրկված բարձրագույն գինովրական ու քաղաքացիական պաշտոնյանների վերապատրաստումը պաշտպանական-անվտանգային քաղաքագիտության գծով: Մեր կարծիքով՝ ՀՀ կրթական համակարգում նպատակահարմար կլինիկ ստեղծել հետազոտական համալսարաններ, այդ թվում՝ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային համալսարանը, քանի որ դրանք հնարավորություն են տալիս կրթական և գիտական քաղադրիչների համադրմամբ ապահովելու ուսումնական ծրագրերի մշտական համապատասխանությունը ամենաբարձ գիտական նվաճումներին:

ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Այսօր աշխարհում շատ երկրներ կարևորում են շարունակական կրթությունը՝ այս համարելով ամբողջ կյանքի ընթացքում մարդու գիտելիքների հարստացման ու դրանց գործնական կիրառման հնտությունների զարգացման, փորձի փոխանակման, միջազգային փորձի հետ հաղորդակցման միջոց: Պաշտպանության համակարգում շարունակական կրթության կենտրոնական զարախարդ անձնակազմի զարգացումն է, փոփոխվող միջավայրին արագորեն հարմարվելու նրանց ունակության ձևավորումը, նպաստումը նրանց մտավոր հնարավորությունների առավել նպատակային զարգացմանն ու արտահայտմանը, հրամանատարակառավարչական կարողությունների զարգացմանը: ՀՀ ռազմակրթական ոլորտում իրականացվող բարեփոխումների շնորհիվ այն ի գործ կլինի ապահովելու այդ շարունակական կրթությունը՝ ներառելով բոլոր մակարդակները՝ սկսած նախազորակոչայինից մինչև բարձրագույն ռազմավարական-անվտանգայինը:

Խորագրով համաժողովի աշխատանքները», 15.06.2012 (www.mil.am/1339773435/page/5):

Մեր կարծիքով՝ ժամանակն է արմատապես փոխելու մոտեցումները լնդիանրապես կրթական և մասնավորապես ռազմական կրթության համակարգի զարգացման նկատմամբ։ Պետք է այդ համակարգի աստիճանակարգության մեջ ավելի բարձր դիրք գրադարձնող օղակի գործունեությունը պայմանավորել ստորին օղակի շրջանավարտի մակարդակով, այդ պահանջները ներկայացնել վերևից ներքև։ Այսինքն՝ հստակ կերպով որոշել այն որակական պարամետրները, որոնց պետք է համապատասխանի մեր ապագա սպան, ըստ այդմ սահմանել այն չափանիշները, որոնց պետք է բավարարի բարձրագույն կրթությունը և այլն։ Ընդամեն այդ պարամետրները պետք է լինեն տարրերակված ըստ զինվորական աստիճանակարգային օղակների։ Օրինակ՝ Հայոց բանակի մարտավարական օղակի ապագա սպան, ըստ մեզ, պետք է՝

– խորապես տիրապետի ժամանակակից մարտի կազմակերպման ու վարման տեսությանն ու պրակտիկային, կարողանա արագ կերպով կողմնորոշել և ճիշտ որոշումներ կայացնել մարտական իրադրության սրբնաց փոփոխությունների ու տեղեկույթի անբավարարության պայմաններում,

– գիտենա իր ենթակա ստորաբաժանումների ուժեղ և բույլ կողմերը, կարողանա զրագետ ձևով կազմակերպել հակառակորդի ուժերի և դիրքերի հետախուզությունը՝ նրա բույլ և ուժեղ կողմերը պարզելու համար, ապա մարտավարական հնարների հմուտ կիրառմամբ չեզոքացնի հակառակորդի ուժեղ կողմերն ու օգտագործի բույրությունները, իսկ մարտի ելքի վրա ենթակա ստորաբաժանման բույրությունների ազդեցությունը նվազեցնի՝ գերազանցությունը հասցնելով վճռորոշ գործոնի,

– խաղաղ ժամանակ կարողանա ենթակա ստորաբաժանումում հաստատել մարտական համերաշխություն, տիրապետել ստեղծված իրավիճակին և կանխատեսել բացասական զարգացումները՝ կանխելով միջանձնային լարվածությունների վտանգավոր աճումը, խուճապային վիճակները, և այլն։

Որպեսզի ապագայում Հայաստանի Հանրապետությունը լինի ժամանակին համենքաց քայլող Զինված ուժեր ունեցող անվտանգ, ժողովրդավարական և առաջադիմական պետություն, անհրաժեշտ է համակարգային մոտեցումներ ցուցաբերելով շարունակել բարեփոխել ռազմական կրթության համակարգը՝ նրա բոլոր բաղկացուցիչներով հանդերձ, ինչն արդեն մոտ ժամանակներս գիտականորեն հիմնավորված հենադաշտ կստեղծի մեր Զինված ուժերում արհեստավարժության մի նոր վերելքի համար։

ՀԻՄՆԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

**ԱԶԳԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏԸ՝ ՈՐՊԵՍ
ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ**

- Բ. Պ. ՊՈՂՈՎՅԱՆ, պարմական գիլուրյունների թեկնածու,
ԱՌՀԻ-ի պետի գրեգակալ-վերլուծական կենտրոնի պետ,
Մ. Մ. ԱՎԵՏԻՒՅՅԱՆ, քաղաքական գիլուրյունների թեկնածու,
ԱՌՀԻ-ի ռազմավարական խաղերի խմբի պետ,
Ա. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԱՌՀԻ-ի կիրեռանվանգության խմբի պետ



ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (ԱՌՀԻ) ստեղծվել է 2005 թ. դեկտեմբերին՝ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՊԱՀՀ) ձևավորման մեջնարկային փուլում, ըստ ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի մողեկի: ԱՌՀԻ-ի ստեղծման գիտական նախագիծը ԱՄՆ-ի ՊԱՀ-ում 2003-2004 թթ. իր գիտական գործուղման ժամանակ մշակել և ԱՄՆ-ի ՊԱՀ-ի ԱՌՀԻ-ի գիտական խորհրդում պաշտպանել է քաղաքական գիտությունների դրվագը, ԱՌՀԻ-ի պետ գեներալ-մայոր Հ. Քորանջյանը:

Ապագա Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի հետազոտական հենքը ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ն է, որն արդեն ունեցել է առիթ իր մտավոր ներուժն ի սպաս դնելու ռազմավարական խնդիրների լուծմանը: Այսպես, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ն դարձավ ԱՄՆ-ի ՊԱՀ-ի գիտական խորհրդատվություններով, ամերիկյան մերողարանության կիրառմամբ Հայաստանի ազգային անվտանգության առաջին ռազմավարության միջգերատեսչական մշակման ակադեմիական համադասողը՝ ապահովելով ռազմավարության ստեղծման գիտական դեկավարումը և փոխլրացման արտաքին քաղաքականության սկզբունքների համաձայն ՌԴ, ՀԱՊԿ-ի, ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի գլխամասային գիտակրթական հաստատություններում դրա փոր-

ձաբննությունը: ԱՌՀԻ-ն մշակել է նաև ՀՀ առաջին ռազմական դրկտրինի ռազմաքաղաքական հիմքերը: Ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դրկտրինի մշակումների ընթացքում բյուրեղացվեցին ինստիտուտում կատարվող հետազոտությունների տիրույթները, ըստ որոնց էլ որոշվեցին գործունեության հիմնական ուղղությունները:

Որպես ապագա ՊԱՀՀ-ի նորամուծական հետազոտական գործիք՝ 2007 թ. հիմնվեց ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի «Աշխատանքային տեսրեր» հանդես-հավելվածը, որտեղ հրապարակվում են ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի վերլուծական կենտրոնի ռազմավարական հետազոտությունների արգասիքները: 2009 թ. ինստիտուտի հետազոտական բաղադրիչն ուժեղացվեց ասպիրանտուրայի, ինչպես նաև «քաղաքագիտություն» մասնագիտությամբ թեկնածուի և դրվագի գիտական աստիճաններ շնորհող՝ ՀՀ ԲՈՀ-ի 056 մասնագիտական խորհրդի ստեղծմամբ:

ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ն սերտ գիտակրթական գործակցություն է հաստատել ԱՄՆ-ի ՊԱՀ-ի հետ: Այդ գործակցության շրջանակում ԱՌՀԻ-ի վեց վերլուծաբաններ մեկամսյա գիտական ստաժավորումներ են անցել ԱՄՆ-ի ՊԱՀ-ի համապատասխան կենտրոններում և քոլեջներում: Նախքան ստաժավորումը նրանք մշակել են կոնկրետ ծրագրերի նախագծեր, որոնք ստաժավորման ժամանակ ենթարկվել են փորձաքննության, լրամշակվել են և ստաժավորումներից հետո ԱՌՀԻ-ում դրվել գործածության մեջ:

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ստեղծման ծրագրի համաձայն՝ նրա ԱՌՀԻ-ում գործելու են երկու՝ Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների ու Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնները: Ընդամենը, 2016 թ. վերջինիս գործունեությունը միտքած է լինելու ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի կազմում Կիրեռանվտանգության ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ստեղծմանը:

2016 թ. ԱՌՀԻ-ն քայլեր է ձեռնարկելու ՊԱՀՀ-ի կազմում Ռազմագիտական հետազոտությունների կենտրոնի ստեղծման ուղղությամբ:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնը գործելու է 2007 թ. ԱՌՀԻ-ում ստեղծված վերլուծական կենտրոնի հենքի վրա: Վերջինս հետազոտություններ է կատարում երկու հիմնական ուղղություններով՝ տարածաշրջանային և գործառության:

Տարածաշրջանային հետազոտություններն ուղղված են ՀՀ ռազմավարական-անվտանգային շահերի տեսանկյունից Հարավային Կովկասում անվտանգության դինամիկայի ուսումնասիրմանը և տարածաշրջանում ներգրավված ուժային կենտրոնների շահերի պարզմանը: Հետազոտությունների արդյունքները ՀՀ ռազմաքաղաքական դեկավարությանն են ներկայացվում վերլուծական գեկուցագրերի և «Աշխատանքային տետրերում» հրապարակվող կողեւկտիվ մենագրական աշխատությունների ձևով: Թե՛ վերլուծական գեկուցագրերը, թե՛ մենագրական հետազոտությունները ավարտվում են համապատասխան եղանակացություններով ու ՀՀ գերատեսչություններին ուղղված առաջարկություններով: 2007–2014 թթ. ՀՀ ՊՆ ԱՌՀ-ն մշակել և հրատարակել է ՀՀ սահմանակից չորս պետությունների՝ Աղբքանի, Թուրքիայի, Իրանի, Վրաստանի ներքին և արտաքին քաղաքականություններին և դրանց ռազմավարական վերագնահատումներին նվիրված մենագրական ժողովածուներ:

Գործառութային հետազոտությունների շարքում ՀՀ ՊՆ ԱՌՀ-ն կատարել է մշակումներ՝ նվիրված Միջազգային ոեյտինգային կազմակերպությունների՝ ՀՀ-ին տրված գնահատումներին, ՀՀ-Սփյուռք հարաբերություններին և ռազմաարդյունաբերության ոլորտում նորամուծությունների դերին:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ – ՀԱՂՈՐԴԱԿՑԱՅԻՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հասարակության կենսագործունեության բոլոր բնագավառներում տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների (ՏՀՏ) լայն կիրառման հետևանքով զգալիորեն մեծացել է դրանց ազդեցությունը ազգային անվտանգության, մասնավորապես, պաշտպանական համակարգի վրա: Միևնույն ժամանակ, ներկայիս անվտանգային գործընթացներում մեծ անորոշությունների առկայության և զարգացումների ոչ գծային ու բարդ բնույթի հաշվառմամբ՝ մեծանում է անվտանգային հետազոտություններում ավանդական վերլուծական մեթոդների հետ մեկտեղ նորարարական հետազոտական գործիքարանի կիրառման կարևորությունը: Ստեղծված պայմաններում կենսական նշանակություն ունեն ազգային անվտանգության վրա ՏՀՏ-ների ներդրման, կիրառման ու զարգացման և դրա հետ կապված մարտահրավերների ազդեցության գնահատումը և այդ մարտա-

հրավերներին արձագանքման վերաբերյալ համապատասխան առաջարկույթների ներկայացումը¹: Հենց այդ խնդիրների լուծման տեսանկյունից էլ կարևոր է ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ում գործող կիրեռանվտանգության և ռազմավարական խաղերի խմբերի հիմնան վրա Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնի ստեղծումը²:

Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնն ստեղծվում է որպես ՊԱՀ-ի գիտահետազոտական քաղաքիչի կառուցվածքային ստորաբաժանմումներից մեկը, որի առաքելությունն է լինելու ՀՀ ազգային անվտանգության քաղաքականության վրա տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և կիրեռանվտանգության ոլորտներում զարգացումների ազդեցության գնահատումը գիտական հետազոտությունների միջոցով: Կենտրոնի նախագիծը լրացնակել և փորձաքննվել է ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնում ԱՌՀԻ-ի կիրեռանվտանգության խմբի փորձագետների 2014–2015 թթ. գիտական երկու մեկանսյա ստաժավորումների ժամանակ:

Կենտրոնի կազմում գործելու են երեք՝ Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների, Ազգային անվտանգության քաղաքականության, Ռազմավարական խաղերի և մողելավորման խմբեր, որոնցից յուրաքանչյուրում ներգրավված են համապատասխան որակավորում ունեցող փորձագետներ (տես նկ. 1):

Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնի ռազմավարական նպատակներն են.

1. հետազոտել ՏՀՏ և կիրեռանվտանգության ոլորտներում զարգացումները, գնահատել ՀՀ-ում դրանցով պայմանավորված նորամուծությունը:

¹ Տես Հայկ Ա. Քորանջյան, Հայաստանի ազգային անվտանգությանն ողղված մարտահրավերները. ազգային անվտանգության ռազմավարություն: «Հակամարտության երենքաղաքակիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները»: Ե., ՀՀ ՊՆ Գ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 686 – 688:

² Տես Հ. Ա. Քորանջյան, Պաշտպանական կրթության բարեփոխման՝ ռազմավարական փոփոխությունների կառավարումը Հայաստանում «Խելացի ուժի» զարգացման տեսանկյունից: «Աշխատանքային տեխներ», 2012, հմ. 4:

ԱՌՅԻ-Ն ՈՐՈՇՄ ՀՅ ՊԱՀԱ-Ի ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՐԱԴՐԻՉ

յունների կիրառման նպատակահարմարությունը ազգային անվտանգության քաղաքականության տեսանկյունից և մշակել համապատասխան առաջարկություններ,

2. հետազոտել ՀՀ պաշտպանական-անվտանգային ոլորտին վերաբերող հիմնախնդիրները և ռազմավարական խաղերի միջոցով աջակցել ՀՀ ռազմաբաղադրական ղեկավարությանը ռազմավարական որոշումների ընդունման գործում,

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՐԱ-ՀԱԳՈՐԴԱԿԱՑՄԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ՏՀԱԱՔ) ԿԵՆՏՐՈՆԻ ՊԵՏ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՐԱ-
ՀԱԳՈՐԴԱԿԱՑՄԻՆ
ՏԵԽՆԱԼՈՒԳԻԱՆԵՐԻ
(ՏՀՏ) ԽՈՐԻ ՊԵՏ

ԱԶԳԱՅԻՆ
ԱՌԵՏԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
(ԱԱՔ) ԽՈՐԻ ՊԵՏ

ԱԶԳԱՅԻՆ
ԽՈՐԻ ՊԵՏ
ԵՎ ՄՈԳՆԵ ԽՈՐԻ ՊԵՏ
(ՄՈԳ) ԽՈՐԻ ՊԵՏ

ՏՀՏ	ՏՀՏ	ՏՀՏ	ՏՀՏ	ԱԱՔ	ԱԱՔ	ԱԱՔ	ԹԱՂԱ	ԹԱՂԱ	ԹԱՂԱ	ԹԱՂԱ	ԹԱՂԱ	ԹԱՂԱ
-----	-----	-----	-----	-----	-----	-----	------	------	------	------	------	------

Նկ. 1. Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնի կառուցվածքը

3. ձևավորել համապատասխան միջավայր՝ ՏՀՏ ոլորտում գործունեություն ծավալող պետական հաստատությունների ու նաև ազգային ընկերությունների ներկայացուցիչների, անկախ փորձագետների համատեղ գիտակիրառական քննարկումների և համագործակցության համար:

Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնն իր ռազմավարական նպատակներին հասնելու և կանոնադրությամբ սահմանվող խնդիրները լուծելու համար իրականացնելու է հետևյալ գործառույթները.

1. մշակել ՀՀ-ի համար կենսական կարևորություն ունեցող ոլորտներում, այդ թվում՝ պաշտպանական-անվտանգային ոլորտում տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառմամբ պայմանավորված հիմնախնդիրների լուծման վերաբերյալ գործնական առաջարկություններ ու նախագծեր և դրանք ներկայացնել համապատասխան պետական կառույցներին,

2. գնահատել ՀՀ ազգային անվտանգության վրա ՏՀՏ և կիրեռան-

վտանգության ոլորտներում տեղի ունեցող զարգացումների ու փոփոխությունների հնարավոր ազդեցությունը,

3. մոդելավորել նորամուծական մեթոդների կիրառմամբ պաշտպանական-անվտանգային ոլորտում տեղի ունեցող ոչ գծային և բարդ գործընթացները, կատարել համակարգային վերլուծություններ և մշակել ու անցկացնել ոպամակարական խաղեր,

4. աջակցել ՀՀ-ում S2S ոլորտի զարգացմանը՝ միջգերատեսչական ու միջազգային համագործակցության, ՊԱՀՀ-ի շրջանակներում կրթական ծրագրերի իրականացման, գիտաժողովների, աշխատաժողովների, կլոր սեղանի շուրջ քննարկումների կազմակերպման և անցկացման միջոցով (տես նկ. 2):³



Նկ. 2. Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները

Կենտրոնի ստեղծման նախագիծը քննարկվել է նաև ՀՀ-ում S2S ոլորտի առաջատար ընկերությունների՝ «Սինոփիս-Արմենիայի», «Վիվասել-ՍՏՍՈ-ի», «Յունիքոմփի» դեկավարների հետ և արժանացել նրանց հավանությանը: Ձեռք է բերվել նաև նախնական պայմանավորվածություն, որ նրանք աջակցեն կենտրոնի տեխնիկական զինանարկ: Ըստ նախնական համաձայնության՝ նշված ընկերությունների աջակցությամբ նախատեսվում է ստեղծել երկու՝ «Համակարգչային ցանցերի գործառությունների» և «Նորամուծության և մոդելավորման» գիտական լաբորատորիաներ:

³ Տես նույն տեղում:

• «Համակարգչային ցանցերի գործառությունների» լաբորատորիան նախատեսված է տեղեկատվական-հաղորդակցային համակարգերի պաշտպանության, ցանցային ներխուժման ռիսկերի նվազեցման մեթոդների ուսումնափրության, ինչպես նաև կիրառական վարժությունների կատարման համար: Լաբորատորիան կօգտագործվի 2017 թ. ՊԱՀՀ-ի կրթական գործունեության շրջանակում մեկնարկող «Տեղեկատվական տեխնոլոգիաների ռազմավարական կառավարում» մագիստրոսական ծրագրով համապատասխան մասնագետների, ինչպես նաև պետական գերատեսչությունների, մասնավորապես՝ պաշտպանության նախարարության աշխատողների մասնագիտական վերապատրաստման համար:

• «Նորամուծության և նորելավորման» գիտական լաբորատորիան հնարավորություն կտա մոդելավորման արդիական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ մշակելու և կազմակերպելու ռազմավարական խաղեր՝ ռազմավարական հետազոտությունների որակի բարեկավմամբ: Լաբորատորիայի մասնագետները նորամուծական մեթոդների կիրառմամբ կլաստարեն համընդգրկուն վերլուծություններ:

Կենտրոնի ձևավորման ծրագրի շրջանակում մշակվել և արտասահմանյան գործընկերների հետ փորձաքննվել են ռազմավարական կարևորությամբ մի շարք նախագծեր, այդ թվում ԱՄՆ-ում SCS-ների գծով դեկավար պաշտոնյաների համակարգի (*Chief Information Officer-CIO*) նորելի տեղայնացմամբ ՀՀ-ում SCS ոլորտի պատասխանատունների համակարգի ներդրման նախագիծը, ՀՀ կիբեռանվտանգության ազգային ռազմավարության որվագիծը և «Տեղեկատվական տեխնոլոգիաների ռազմավարական կառավարում» մագիստրոսական ծրագիրը:

ՀՀ-ում SCS ոլորտի պատասխանագույի համակարգի ներդրման նախագծի: ՀՀ տեղեկատվական ոլորտի բարեփոխումների համատեքստում կարևորվում են ոլորտի հետևողական զարգացման հեռանետ միասնական պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը⁴: Ըստ այլի ՀՀ-ում SCS ոլորտի պատասխանատուի համակարգի ներդրման նախագիծը, որը մշակել է ՀՀ ՊՆ ԱՌՀՀ-ի կիբեռանվտանգության խումբը, ապա լրամշակվել և փորձաքննվել է ԱՄՆ-ի ՊԱՀ-ի Տեխնոլոգիաների և

⁴ Տես Հայկ Ս. Քորանջյան, Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին անվտանգության ռազմավարությունները: «Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում»: Ե., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀՀ, 2008, էջ 171:

ազգային անվտանգության քաղաքականության ու Տեղեկատվական ռեսուրսների կառավարման քոլեջի փորձագետների մասնակցությամբ, միտված է ՀՀ-ում SՀՏ և տեղեկատվական անվտանգության (ՏԱ) ապահովման բնագավառներում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և գերակայությունների հստակեցմանն ու իրագործմանը, SՀՏ ոլորտի զարգացման պլանավորմանն ու բյուջեավորմանը, SՀՏ ռազմավարական ռեսուրսների ձեռքբերմանը, կիրեռանվտանգության ռազմավարության և դրա իրականացման քաղաքականության մշակմանը, մարդկային ու կառավարչական ներուժների համախմբմանը և միասնական, նպատակային, արդյունավետ ու համակարգված կառավարմանը⁵:

ՀՀ կիրեռանվտանգության ազգային ռազմավարության ուրվագիծ:

Հաղորդատեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ու կիրառումը, լինելով պետության և հասարակության արդի կենսագործունեության համակարգաստեղծ գործոն, էապես ազդում է ՀՀ քաղաքական, տնտեսական և այլ ոլորտների վրա: ՀՀ ազգային անվտանգության գերակայությունների շարքում կարևորում է տեղեկատվական անվտանգության ապահովումը, ինչը հրատապ է դարձնում ոլորտում նոր զարգացումների մշտագննումը, սպառնալիքների բացահայտումը և տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի բարեփոխումը⁶:

ՀՀ կիրեռանվտանգության ազգային ռազմավարության ուրվագիծը, որը մշակել է ՀՀ ՊՆ ԱՌՀ-ի կիրեռանվտանգության խումբը, փորձաքննել են ՆԱՏՕ-ի Պաշտպանական ակադեմիաների և անվտանգային հետազոտությունների ինստիտուտների «Գործընկերություն հանուն խաղաղության» կոնսորցիոնի կազմում գործող կիրեռանվտանգության կրթական ծրագրի մշակման խմբի անդամները և ԱՍՆ-ի ՊԱՀ-ի փորձագետները: ՈՒրվագիծը ներառում է դրույթներ ՀՀ-ում միջգերատեսչական համագործակցությունով՝

⁵ Ավելի հանգամանորեն տես S. Քոչարյան, Բ. Պողոսյան, Ա. Գրիգորյան, Կ. Գալյան, Ա. Բարսեղյան, Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պատասխանատուի համակարգի ներդրման արդիականությունը: ««Կոնֆիդենտային հաղորդակցություն և տեղեկատվական անվտանգություն» գիտաժողովի նյութեր»: Ե., 2015, էջ 106–111:

⁶ Տես Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» հմ. ՆԿ-97-Ն կարգադրությունը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2009, հմ. 35(701)):

յամբ կիրեռանվտանգության համապետական քաղաքականության և ռազմավարության մշակման, տարրեր գերատեսչությունների ներուժների համախմբմամբ կիրեռանվտանգության ոլորտը կառավարող մարմնի ծևափորման, պետության համար կարևոր նշանակություն ունեցող ենթակառուցվածքների, առանցքային կարևորությամբ ակտիվների^{*} կիրեռանվտանգության ապահովման, ՀՀ-ում պետական և մասնավոր հատվածում կիրեռանվտանգության մակարդակի բարձրացման ուղղված գործողությունների համակարգման, մշտագննման և ոիսկերի գնահատման, ՏՀՏ և տեղեկատվական անվտանգության միջազգային ստանդարտների ներդրմանն ուղղված արդյունավետ քայլերի իրականացման վերաբերյալ:

«Տեղեկադրվական գեխնոլոգիաների ռազմավարական կառավարում» մագիստրոսական ծրագիր: Ներկայումս տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների ինտենսիվ զարգացումն ու պետական և հասարակական գրեթե բոլոր ոլորտներում կիրառումը հանգեցնում են որակական փոփոխությունների, ինչն ավելի խիստ պահանջներ է ներկայացնում անվտանգության ապահովման համակարգերին: Ավելին, ՏՀՏ ոլորտը ՀՀ տնտեսության գերակա ճյուղ է, և տվյալ ոլորտի զարգացումը ՀՀ-ի համար ունի ռազմավարական նշանակություն: ՈՒստի հրատապ խնդիր է տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման և կիրեռանվտանգության ապահովման ոլորտներում համապարփակ համապետական ռազմավարության ու քաղաքականության մշակումը և պլանաշափ իրագործումը, ինչը պահանջում է բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստում: Այդ խնդիրի լուծմանը մեծապես կնպաստի ՀՀ ՊՆ ԱՌՀ-ի կիրեռանվտանգության խմբի մշակած «Տեղեկատվական տեխնոլոգիաների ռազմավարական կառավարում» մագիստրոսական ծրագիրը: Այն մշակվել է ԱՄՆ-ի ՊԱՀ-ի Տեղեկատվական ռեսուրսների կառավարման բոլեղի փորձագետների հետ համագործակցությամբ: Ծրագիրը խարսխվում է «հետազոտության վրա իիմնվող» և «կրթությունից՝ արդյունաբերություն» համակարգային մոտեցումների վրա, որոնք առնչվում են տվյալ խնդիրի լուծման մեթոդաբանական, կազմակերպական, բովանդակային և տեխնոլոգիական կողմները:

* Բոլոր այն օբյեկտները (սարքեր, համակարգային ցանցեր, ենթակառուցվածքներ, տվյալների շտեմարաններ և այլն), որոնք առնչվում են հաղորդատեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետ և ունեն կիրեռանվտանգության ապահովման կարիք:

Կենտրոնի կարևոր գործառույթներից են նաև ռազմավարական խաղերի կազմակերպումն ու մոդելավորումը՝ ուղղված ինչպես հետազոտական, այնպես էլ կրթական նպատակների իրականացմանը:

Ռազմավարական խաղերի մեթոդաբանության կիրառմամբ ռազմավարական հետազոտությունների կատարման և կրթական ծրագրերի իրականացման նպատակով ԱՌՀԻ-ի վերլուծական կենտրոնը 2012 թ. սկզբից ձեռնամուխ է եղել ռազմավարական խաղերի մեթոդաբանության յուրացմանը՝ շեշտը դնելով հիմնականում ԱՄՆ-ի ՊԱՀ-ում կազմակերպվող ռազմավարական խաղերի առանձնահատկությունների ուսումնասիրության վրա:

2012 թ. վերլուծական կենտրոնում ԱՌՀԻ-ի գիտնական-վերլուծաբանների և ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչների մասնակցությամբ կատարվեցին ռազմավարական խաղերի մեթոդաբանության կիրառմամբ հայ-բուրժական հարաբերությունների հեռանկարներին և Ղարաբաղյան հականարտության կարգավորման հիմնախնդիրների մշակումներ:

Ռազմավարական խաղերի մեթոդաբանության ուսումնասիրության ուղղությամբ կատարված աշխատանքները հիմք դարձան, որպեսզի ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով ԱՌՀԻ-ի վերլուծական կենտրոնի կազմում 2012 թ. դեկտեմբերին ստեղծվի ռազմավարական խաղերի խումբ՝ ռազմավարական խաղերում մասնագիտացող երկու մեթոդաբաննի և երկու մասնագետ-տեխնոլոգի հաստիքներով: Խումբը 2013 թ. նոյեմբեր-դեկտեմբերի ամիսներին ԱՌՀԻ-ում կազմակերպեց երկու ռազմավարական խաղ՝ նվիրված բանակցային հմտությունների զարգացմանը և Ղարաբաղյան հականարտությունում զայման քաղաքականության իրականացմանը:

2014 թ. երկրորդ կեսից Ռազմավարական խաղերի խումբը ԱՌՀԻ-ի գիտնական-վերլուծաբանների հետ համագործակցությամբ ձեռնամուխ է եղել ռազմավարական խաղերի, մասնավորապես, սցենարային պլանավորման մեթոդաբանության կիրառմամբ վերլուծական գեկուցագրերի պատրաստմանը: Տվյալ մեթոդաբանությամբ պատրաստված առաջին գեկուցագրերը վերաբերում են և՛ Սահմանադրական բարեփոխումների գործընթացին և ս.թ. հունիսի 7-ին Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրություններին:

Ռազմավարական խաղերի խումբն աշխատում է ԱՄՆ-ի ՊԱՀ-ում կիրառվող ռազմավարական խաղերի մեթոդաբանության տեղայնացման ուղղությամբ: ԱՄՆ-ի ՊԱՀ-ի Կիրառական ռազմավարական ուսուցման կենտրոնը (ԿՌՈՒԿ) ռազմավարական խաղերի կազմակերպմամբ մեկ

հարկի տակ է հավաքում պետության ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր իշխանության, ուժային և զանազան հետախուզական կառույցների ներկայացուցիչների: Միջգերատեսչական մակարդակով անցկացվող խաղերը պետության տարբեր իշխանական կառույցների միջև կապերի ստեղծմամբ մեծացնում են պետական կառավարման արդյունավետությունը:

ԿՌՈՒԿ-ը ներգրավվում է նաև համալսարանի կրթական գործունեության մեջ՝ ուսանողների համար ուսազմավարական խաղերի, ճգնաժամային իրավիճակների հաղթահարման վարժությունների մշակման և անցկացման ձևով: ԿՌՈՒԿ-ը համագործակցում է ԱՄՆ-ի առաջտար այլ պետական և մասնավոր գիտահետազոտական հաստատությունների՝ համալսարանների, ուղղային կենտրոնների, ինչպես նաև այն հասարակական կազմակերպությունների հետ, որոնք գրադպատ են ուսազմավարական խաղերի մերոդարանության ուսումնասիրությամբ և խաղերի կազմակերպմամբ:

Ուսազմավարական խաղերի մերոդարանության կիրառումը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ ներկայում կրթական գործնքացում է ականա նշանակություն է տրվում ակտիվ ուսուցման (*active learning, experiential learning*) մերոդներին, որոնց առանցքը «սովորել՝ կատարել» գաղափարն է (տես նկ. 3):

Ուսազմավարական խաղերի օգտակարությունը արտացոլված է Կոնֆուցիոսի խոսքում. «Լուս եմ՝ մոռանում եմ, տեսնում եմ՝ հիշում եմ, անում եմ՝ հասկանում եմ»:

Ուսազմավարական խաղերի կիրառմամբ իրագործվող կրթական գործընթացի առավելությունն այն է, որ այն որոշումներ ընդունողներին հնարավորություն է տալիս ձեռք բերելու նոր գիտելիքներ և պատրաստվելու ապագա խնդիրների արդյունավետ լուծմանը: Ուսազմավարական խաղերը ձևավորում են մի միջավայր, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում պետական իշխանության տարբեր օղակների ներկայացուցիչներին համախմբելու և միմյանց դիրքորոշումները հասկանալու համար, ինչը պետական մակարդակով ներդաշնակ քաղաքականության մշակման գրավականն է: Ուսազմավարական խաղերի ընթացքում հնարավոր է դառնում ի հայտ բերել առկա քաղաքականության թույլ և ուժեղ կողմերը, ինչի շնորհիվ կարող են մշակվել նոր ուղղություններ, հայեցակարգներ և սկզբունքներ:

ՀՀ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում (ՊԱՀՀ) ուսազմավարական խաղերով գրադպատ ստորաբաժանման հիմնական գործառույթները, ԱՄՆ-ի ՊԱՀ-ի օրինակով, լինելու են ուսազմավա-

բական խաղերի կազմակերպումը և անվտանգային իրավիճակների մոդելավորումը: 2014–2015 թթ. Ռազմավարական խաղերի խումքը ձեռնամուխ է եղել իր գիտագործնական կարողությունների զարգացմանը, ինչը ներառում է ռազմավարական խաղերի մեթոդաբանության, խաղերի տեսության, սցենարային պլանավորման գործիքաբանի, ՄՎԸ վերլուծության և այլ գիտավերլուծական մեթոդների ուսումնասիրություն:



Նկ. 3. Տարբեր մեթոդներով յուրացված նյութի հիշապահման աստիճանը տոկոսներով⁷

Խմբի գործունեության արդյունավետությունը մեծացնելու համար անհրաժեշտ կլինի այն համալրել նոր կաղըերով: Բացի խմբի պետից, խմբի մշտական անձնակազմության ներկայությամբ պահպան կատարելու համար անհնագետներ: Անձնակազմի համալրման սկզբունքը բխում է ռազմավարական խաղերում լայնորեն կիրավող ՔՏՍՍԻԲ (քաղաքական, տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական, իրավական, բնապահպանական) վերլուծության մեթոդից: Քանի որ ռազմավարական խաղերում քննարկվող խնդիրները հիմնականում առնչվում են նշված ոլորտներին, նպատակահարմաք է խմբի համալրում քաղաքագետներով, տնտեսագետներով, սո-

⁷ See «The Learning Pyramid. National Training Laboratory» (https://fitnyc.edu/files/pdfs/CET_TL_LearningPyramid.pdf):

ցիոլոգներով, իրավաբաններով (ինչպես ներքին օրենսդրության, այնպես էլ միջազգային իրավունքի մասնագետներով) և էներգետիկայի ոլորտի մասնագետներով:

Խմբի նախագծերն ուղղված են լինելու կոնկրետ անվտանգային խնդիրների լուծմանը: Արդի միջազգային հարաբերություններում անորոշության բավական բարձր մակարդակի հաշվառմամբ խաղերի ժամանակ մողելավորվելու են հնարավոր զարգացումները կարճաժամկետ կտրվածքով (6–12 ամիս): Մասնակիցներից պահանջվելու է գնահատել իրավիճակը և մշակել իրատեսական լուծումների տարրերակմեր:

Հարկ է նշել, որ Կենտրոնի կազմում առկա խմբերի արդյունավետ գործունեությունը հիմք է նախապատրաստելու ՊԱՀՀ-ի կազմում Կիրեռականվաճագրության ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ստեղծման համար:

Ո-ԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՖՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԱՌՀԻ-ի կարևոր գործառույթներից է նաև ռազմավարական քաղաքական ֆորումների կազմակերպումը: ՀՀ ռազմավարական դեկավարությանը արտաքին անվտանգային հիմնախնդիրների վերաբերյալ որակյալ մշակումների ներկայացման, ինչպես նաև ռազմավարական որոշումներ կայացնող դեկավար կադրերի պատրաստման նպատակով մազիստրոսական և վերապատրաստման կրթական ծրագրերի իրականացման համար էական նշանակություն ունի արտերկիր առաջատար համալսարանների և վերլուծական կենտրոնների հետ համագործակցության խորացումը: Վերջին մի քանի տարիներին ԱՌՀ-ն գործընկերային հարաբերություններ է հաստատել մի շարք առաջատար հաստատությունների հետ, ինչպիսիք են՝ Հարվարդի համալսարանի Սևոլվյան անվտանգության ծրագիրը, ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանը, Արտաքին քաղաքականության ամերիկյան խորհուրդը, Քրաունի համալսարանը, Քառնեզիի հիմնադրամը, Օքսֆորդի համալսարանը, Չարեմ Հաուզը, Լինուի ժամանակակից Սովորության համալսարանը, Մուկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը, Ռազմավարական հետազոտությունների ոռուսաստանյան ինստիտուտը, ՈՒ Գիտությունների ակադեմիայի Համաշխարհային Էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների ինստիտուտը, Քաղաքական գիտության ռուսաստանյան ասոցիացիան,

ՀԱՊԿ-ի ինստիտուտը, ՀԱՊԿ-ի գիտափորձագիտական խորհուրդը, Երուաղեմի համալսարանը, Խարայելի՝ Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների ինստիտուտը, Բուխարեստի Արևելանվոպական և ասիական հետազոտությունների կենտրոնը, Թեհրանի Ալլամեհ Թարատուրայի համալսարանը, Ստամբուլի Քաղիք Հաս համալսարանը, Ղազախստանի Նախագահին առջների Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, Ղրղզստանի Ռազմավարական վերլուծությունների և կանխատեսումների ինստիտուտը, Բելառուսի Նախագահի աշխատակազմին առջների տեղեկատվական-վերլուծական կենտրոնը:

Նշված ուղեղային կենտրոնների հետ սերտ համագործակցությամբ ԱՌՀ-ն 2008, 2009, 2011 թթ. կազմակերպել է տարածաշրջանային անվտանգության դիմամիկային նվիրված միջազգային գիտաժողովներ, իսկ 2012 թ. նոյեմբերին անցկացրել է տարածաշրջանային անվտանգության դիմամիկային նվիրված առաջին ռազմավարական քաղաքական ֆորումը:

2011 թ. մայիսին ԱՌՀ-ն ՀԱՊԿ-ի քարտուղարության հետ համատեղ կազմակերպել է ՀԱՊԿ-ի զարգացման ռազմավարությանը նվիրված միջազգային գիտաժողով, իսկ 2013 թ. հունիսին՝ «ՀԱՊԿ-ի ռազմական բաղադրիչի պաշտպանական-անվտանգային ուղենիշները» խորագրով երկրորդ ռազմավարական քաղաքական ֆորումը: Ֆորումի ընթացքում ՀԱՊԿ-ի Գլխավոր քարտուղար Ն. Բորյուժան առաջարկել է Երևանում կազմակերպել ՀԱՊԿ-ի ռազմավարական քաղաքական ամենամյա ֆորումներ՝ լրանց մասնակիցների ցանկի ընդլայնմանը և այն պետություններից փորձագետների հրավիրմամբ, որոնք ՀԱՊԿ-ի անդամ չեն: Առաջարկությունը արժանացել է ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի և ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հավանությանը:

2014 թ. հուլիսի 1–2-ը «Խաղաղապահական գործողություններին ուղղված մարտահրավերների միջազգային ֆորումի» աջակցությամբ Երևանում տեղի ունեցավ «ՍԱԿ-ի սկզբունքների և ստանդարտների հիման վրա ազգային և տարածաշրջանային խաղաղարարական ներուժների ինտեգրումը խաղաղ օպերացիաների համբնդիանուր համակարգում» թեմայով միջազգային ռազմավարական քաղաքական ֆորում: 2014 թ. մարտից միջազգային հարաբերություններում ստեղծված ճգնաժամի պայմաններում ԱՌՀ-ն մեկ սեղանի շուրջ հավաքեց ՆԱՏՕ-ի անդամ պետությունների և Ռուսաստանի ու ՀԱՊԿ-ի ներկայացուցիչների՝ ստանձնելով անվտանգային կարևոր հիմնախնդիրների շուրջ ակարեմիական

երկխոսության հարթակի դեր, ինչը էական նշանակություն ունի ՀՀ միջազգային հեղինակության ամրապնդման համար:

Ֆորումի անցկացումից հետո «Խաղաղապահական գործողությունների մարտահրավերների միջազգային ֆորումի» տևորեն Անիկա Հիլդինգ Նորբերգից ստացվեց առաջարկություն, որ ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-Ն որպես ՀՀ ներկայացուցիչ անդամակցի «Խաղաղապահական գործողությունների մարտահրավերների միջազգային ֆորումին»: Այն պետական գործիչների, փորձագետների և ակադեմիական շրջանների ներկայացուցիչների միջև կառուցղական երկխոսության ռազմավարական հարթակ է, որին տվյալ պահին անդամակցում են 22 պետություններ, այդ թվում՝ ԱՄՆ-ը, Սեծ Բրիտանիան, ՌԴ-ն, Չինաստանը, Ֆրանսիան, Գերմանիան, Թուրքիան:

2014 թ. հոկտեմբերին Պեկինում կայացած ֆորումի ամենամյա վեհաժողովում որոշում ընդունվեց ֆորումին ՀՀ (որին ներկայացնում է ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-Ն) անդամակցության մասին: Ֆորումի հետ ձեռք բերված պայմանագրովածության համաձայն՝ ս. թ. հոկտեմբերի 5–6-ը Երևանում անցկացվեց Ֆորումի՝ «Հաստատությունների և կարողությունների կառուցումը հանուն խաղաղության ԱԱԿ-ի վերանայման հանձնախմբերի խորհրդատվությունների հետևանքները ապագա առաքելությունների համար» խորագրով ամենամյա խորհրդաժողովը՝ ավելի քան 60 օտարերկրյա ներկայացուցիչների մասնակցությամբ:

Այսպիսով՝ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ստեղծմամբ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի գործառույթներն ընդլայնվելու են, հետազոտական աշխատանքների ծավալը մեծանալու է, դրանց կատարման որակը էապես բարելավվելու է, խորանալու են ինստիտուտի կապերն ինչպես միջազգային ասպարեզում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ներսում: Որպես արդյունք՝ ԱՌՀԻ-ն կնպաստի ՀՀ-ում պաշտպանական-անվտանգային ոլորտում ընդունվող որոշումների գիտական հիմնավորվածության ու ճշգրտության, այդ ոլորտում պետական քաղաքականության արդյունավետության մեծացմանը և պաշտպանական-անվտանգային կրթության մակարդակի բարձրացմանն ու միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը:

**ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-
ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԻՆՍԻՏՈՒՏԸ՝ ՈՐՊԵՍ ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՄԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ**

**Վ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գնդապետ, հոգեբանական զիվուրյունների
դոկտոր, դոցենտ, ՀՀ ՊՆ ԱՌՀԵ-ի պետի՝ ուսումնական մասի գծով
դիդակալ, Ա. Վ. ԱԹԱՆԵՍՅԱՆ, քաղաքական զիվուրյունների
դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՊՆ ԱՌՀԵ-ի զիվմական-վերլուծաբանն
ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ**



Զարգացած կրթական համակարգը ցանկացած պետության կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախադրյալներից է: Ասվածը վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետությանը, որտեղ իրազործվող կրթական բարեփոխումների նպատակները կրթական համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացումն ու միջազգային ստանդարտներին համապատասխանեցումն են:

Այդ նպատակների իրականացմանն ուղղված կարևոր քայլ էր ՀՀ ինտեգրումը բարձրագույն կրթության եվրոպական տարածությանը, մասնավորապես՝ բարձրագույն կրթության համակարգում Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխանող մի շարք արմատական փոփոխությունների ձեռնարկումը:

«Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» 485-րդ կետով կարևորվում է հետազոտական համալսարանների ստեղծումը, ինչը հնարավորություն կտա մեծ արդյունավետությամբ գուգակցելու ուսուցման գիտական և կրթական բաղադրիչները, հետևաբար և պատրաստելու որակյալ, գիտութ-

յան ժամանակակից պահանջներին համապատասխանող մասնագետների: Այդ նույն կետով կարևորվում է նաև հետազոտական համալսարաններում մագիստրոսի և բարձրագույն մասնագիտական կրթության հենքի վրա ասպիրանտի, հայցորդի ծրագրերով հետրուհական մասնագիտական կրթությունը¹:

Պաշտպանական կրթության համակարգը*, լինելով ՀՀ ընդհանուր կրթական համակարգի մաս, նույնպես խարսխվում է Քողոնիայի գործընթացի վրա: Սակայն հարկ է նկատել, որ

• ՀՀ-ում չկան պաշտպանական-անվտանգային ոլորտում ռազմավարական որոշումներ կայացնող կաղդերի պատրաստմանը զբաղվող, գիտակրթական ծրագրեր իրականացնող կառույցներ, և այդ ոլորտում բարձրագույն և կամ գլխավոր պաշտոններ զբաղեցնող մասնագետների համար մագիստրոսական ծրագրերի շրջանակներում կրթական ծառայություն չի մատուցվում,

• ՀՀ պաշտպանական-անվտանգային ոլորտում նկատվում է ըստ կոնկրետ ուղղությունների գիտահետազոտական աշխատանք կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ ու փորձ ունեցող մասնագետների պակաս:

ՀՀ պաշտպանական-անվտանգային ոլորտում ռազմավարական տրամաչափի (ռազմավարական որոշումներ կայացնող) կաղդեր հնարավոր է արդյունավետ կերպով պատրաստել մասնագիտական գիտակրթական հաստատությունում՝ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում (ՊԱՀՀ), որտեղ ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգի առանձնահատկությունների և կրթական ու գիտահետազոտական բաղադրիչների համարման ամերիկյան փորձի ու մեթոդարա-

¹ Տես ՀՀ Կառավարության 2014 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014–2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի հմ. 1207-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հմ. 442-Ն որոշումը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2014, հմ. 23(1036).1):

* Պաշտպանական կրթության համակարգը ներառում է նախնական գինվորական պատրաստումը, ռազմական կրթությունը և պաշտպանական-անվտանգային քաղաքացիության գծով կրթությունը (տես Մ. Մ. Կարպահյան, Վ. Հ. Մարգարյան, Վ. Պ. Ավետիքյան, Բ. Պ. Պողոսյան, Կ. Կ. Բաղդասարյան, Հայաստանի Հանրապետության պաշտպանական կրթության և կաղդերի տեղաբաշխման համակարգի զարգացման ռազմավարության հիմունքները: «Հայկական բանակ», 2010, հմ. 1):

նուրյան հաշվառմամբ կկազմակերպվի ունկնդիրների մեջ պաշտպանական-անվտանգային քաղաքականության մշակման և իրականացման առաջավարական ունակությունների ձևափորման գործընթաց: Ասվածից բխում է, որ ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի կերպափոխմամբ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ստեղծումը նպատակառուղղված է պաշտպանական ոլորտում ՀՀ ազգային շահերի առաջամրգման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովմանը նպաստելուն:

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ստեղծումը պայմանավորված է պետության անվտանգության ապահովման խնդիրներով գրաղվող գերատեսչությունների բարձրագույն դեկավար օդակի կադրերին միջզերատեսչական ծևաչափով կազմակերպված կրթության միջոցով միասնական գիտելիքի հաղորդման և ուսումնական մակարդակում այդ գիտելիքի կիրառման արվեստին վարժեցման, ինչպես նաև պաշտպանական-անվտանգային ոլորտում ուսումնաբանական դեկավարության ուսումնական որոշումների համար հետազոտական աշխատանքների գիտակիրառական արգասիրների շնորհիվ գիտական հենքի ապահովման անհրաժեշտությամբ:

Այսօր ՀՀ ազգային անվտանգության ապահովման համար պահանջվում են պետության ներքին և արտաքին անվտանգության միջավայրների հետազոտում ու գնահատում, հնարավոր զարգացումների գիտականորեն հիմնավորված կանխատեսում: Տարածաշրջանում ծևափորված անվտանգային միջավայրում Հայաստանի Հանրապետության համար առկա սպառնալիքների բնույթը հրամայական է դարձնում նրա անվտանգության ապահովումը առաջին հերթին պաշտպանական ոլորտում², ինչը ենթադրում է այդ ոլորտում ոչ միայն բարձր մակարդակի մտավոր ներուժով, առաջավարին բնորոշ հատկությունների համախմբով օժտված, բարձր մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների առկայություն, այլև նրանց ներդաշնակ համագործակցություն: Դա հնարավորություն կտա ՊԱՀՀ-ի ստեղծմամբ արդյունավետ կերպով ապահովելու ՀՀ ԶՈՒ-ի Գերագույն գիտակոր հրամանատարի շտորջը պաշտպանական-անվտանգային ոլորտի դեկավար օդակի կադրերի համախմբումը միասնական գիտելիքի ու փոխանական մասնագիտական գործունեության հիմն վրա: Այս ամենը նշանակում է, որ ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի հիման վրա ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ստեղծումը հրատապ խնդիր է:

² U. Ohanjanian, ՀՀ Պաշտպանության ուսումնական վերանայման էությունը և նպատակը: «ՀԲ», 2015, հմ 3:

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-Ի նախագիծը՝ որպես հետազոտական ծրագրի բաղկացուցիչ, մշակել է ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ, ՀՀ Պաշտպանության նախարարի խորհրդական, քաղաքական գիտությունների դրկտոր (ՈՒ), պրոֆեսոր (ՀՀ), ԱՄՆ-ի ՊԱՀ-ի հրավիրված առաջատար պրոֆեսոր, ՈՒ Ուազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, հակասահարեկչության գծով գիտական փորձագետ (ԱՄՆ), ՀԱՊԿ-ի գիտափորձագիտական խորհրդի անդամ գեներալ-մայոր Հ. Քորանջյանը 2003–2004 թթ. ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանում իր ակադեմիական ստաժավորման ընթացքում և պաշտպանել է ԱՄՆ-ի ՊԱՀ-ի ակադեմիական խորհրդում։ Ընդ որում, ՀՀ ՊԱՀՀ-ի նախագիծը՝ որպես «խելացի ուժի» կիրառմանը միտված ձեռնարկում, մշակել է ԱՄՆ-ի ՊԱՀ-ի՝ գիտության գծով նախկին առաջին պրոռեկտոր, ՆԱՏՕ-ի ԶՀԽ Կոնսորցիոնի պաշտպանական կրթության զարգացման ծրագրի հայկական հատվածի ամերիկյան համանախազահ դրկտոր Զեյմս Քիզլի ակադեմիական խորհրդատվություններով³:

2004–2014 թթ. ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի նախագիծը լրամշակվել ու փորձաքննվել է ՀՀ և ԱՄՆ-ի առաջատար գիտակրթական ու պետական հաստատություններում, մասնավորապես՝ ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Կիրառական ուսամբավարական ուսուցման կենտրոնում, Տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնում, Միջազգային անվտանգային հարաբերությունների բոլեցում, Հարվարդի համալսարանում, Իրավունքի և դիվանագիտության Ֆենչերյան դպրոցում, ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեում։

ՊԱՀՀ-ի՝ պետության ղեկավար կազմի վերապատրաստման (կրթական) բաղադրիչը մշակվել է ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի և Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հանձնարարությամբ և 2010 թ. գարնանը փորձաքննվել է ԱՌՀԻ-ի պետ, քաղաքական գիտությունների դրկտոր, պրոֆեսոր Հ. Քորանջյանի՝ Զ. Քենեթի անվան Պետութենագիտության դպրոցի Ազգային անվտանգության ծրագրով ակադեմիական-հետազոտական ստաժավորման ժամանակ⁴։

Կրթական ծրագրերը նույնպես փորձաքննվել են ԱՄՆ-ի ՊԱՀ-ի հա-

³ Տես Հ. Ս. Քորանջյան, Պաշտպանական կրթության բարեփոխմամբ՝ ուսամբավարական փոփոխությունների կառավարումը Հայաստանում «խելացի ուժի» զարգացման տեսանկյունից: «Աշխատանքային տեսրեր», 2012, հմ. 4:

⁴ Տես նույն տեղում։

մապատասխան ստորաբաժանումներում (ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Կիրառական ռազմավարական ուսուցման կենտրոն, Տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոն, Միջազգային անվտանգային հարաբերությունների բոլեղ, Տեղեկատվական ռեսուրսների կառավարման բոլեղ և այլն), ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում, ինչպես նաև դրկտոր Զեյմս Ջիգլի և ՆԱՏՕ-ի պաշտպանական կրթության զարգացման ծրագրի (*Defense Education Enhancement Program (DEEP)*) մասնագետների կողմից:

Հարկ է նշել, որ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում կրթական գործընթացների իրականացումն ու հետազոտական բաղադրիչի հետ դրանց համադրումը հենվում են ակադեմիական ազատությունների և զինվորական կառույցին հատուկ կարգապահության համակցման, ինչպես նաև անվտանգային խնդիրների լուծման առաջադիմական սկզբունքների ու մերժմների կիրառման փորձի վրա, ինչով պայմանավորված է ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի առաքելության յուրօրինակությունը՝ ի տարրերություն ազգային կրթական համակարգի այլ ուսումնական և հետազոտական կառույցներից:

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում կրթական գործընթացն իրականացնելու համար մշակվել են անհրաժեշտ փաստաթղթեր, մասնավորապես.

1. ՊԱՀՀ-ի կրթական բաղադրիչի՝ Ռազմավարական պաշտպանական-անվտանգային կրթության ազգային ինստիտուտի (ՌՊԱԿԱ) կառուցվածքը, որա ստորաբաժանումների, ինչպես նաև այդ ստորաբաժանումներում ներառված մասնագետների գործառույթները,

2. մագիստրոսական կրթական ծրագրերը.

ա) «Ռազմավարական անվտանգություն» (*Strategic Security (SS)*),

բ) «Տեղեկատվական տեխնոլոգիաների ռազմավարական կառավարում» (*Strategic Management of Information Technologies*),

3. պաշտպանական անվտանգային համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացմանն ուղղված մեկամյա կրթական ծրագիրը (լրացուցիչ կրթական ծրագիր), որն իրագործվում է միջգերատեսչական ձևաչափով,

4. առարկայական ծրագրերի մշակման ուղեցույցը,

5. ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաս-

տատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի պահանջների հաշվառմամբ,

6. մագիստրոսի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ առեստավորման կարգը,

7. կրթական ծրագրերի շրջանակներում իրականացվող ռազմավարական խաղերի մասնակիցների ակտիվության գնահատման սանդղակը,

8. մագիստրանտների գիտելիքների գնահատման կանոնակարգը՝ կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (*ECTS*) պահանջներին համապատասխան,

9. կրթության որակի ապահովման հայեցակարգը՝ Քարձրագույն կըրպության որակի ապահովման միջազգային ասցիացիայի (*ENQA*) և ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների հաշվառմամբ,

10. մագիստրանտների ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը*,

11. ուսումնական ծրագրերի պետական կրթական չափորոշիչները՝ քարձրագույն մասնագիտական և հետրուհական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգի պահանջների հաշվառմամբ,

12. պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության անհատական և կոլեկտիվ գնահատման եղանակները⁵,

13. լիցենզիա ստանալու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերը՝ ըստ Հայաստանի Հանրապետությունում կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի հմ. 372 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին 2009 թ. հուլիսի 9-ի հմ. 808-Ն Կառավարության որոշման պահանջների:

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի կրթական բաղադրիչը՝ ՈՊԱԿԱԲ-ն, կազմված է լինելու 3 կառուցվածքային ստորաբաժնումներից.

* Թեև մագիստրանտների ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը մշակված է, այդուհանդերձ, այդ պրակտիկան չի իրականացվելու՝ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում կրթական գործընթացի առանձնահատկությունների հաշվառմամբ:

⁵ Տես Ռ. Խաչարյան, Ա. Կարարելյան, Ա. Բուղալյան, Ա. Պապյան, Լ. Ալբյան, Ա. Վիրաբյան, Ա. Մագմանյան, Ա. Շահինյան, Մարդկային ռեսուրսների կառավարումը քարձրագույն ուսումնական հաստատություններում: Ե., 2015, էջ 151:

ա) գիտառումնական կենտրոն,

բ) մագիստրատորայի բաժին,

գ) լրացուցիչ կրթության բաժին:

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի մագիստրատորա կարող են ընդունվել մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) դիպլոմ և պաշտպանական-անվտանգային ոլորտում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող, շահագրգոռ գերատեսչություններում բարձրագույն և/կամ գլխավոր պաշտոնների խմբերում հաստիք զբաղեցնող, հայերենի գերազանց, անգլերեն և ռուսերեն լեզուների լավ իմացությամբ մասնագետներ, որոնց երաշխավորել են գերատեսչությունների ղեկավարները:

Մագիստրոսական ծրագրերի տևողությունը մեկ ակադեմիական տարի՝ է՝ 60 կրթիչների կուտակմամբ, և ներառում է հիմնական ու կամընտրական առարկաներ, լսարանային և անհատական աշխատանքի համար նախատեսվող ժամեր, գիտահետազոտական աշխատանք և մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն:

Պաշտպանական-անվտանգային համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացմանն ուղղված մեկամսյա կրթական ծրագիրը մագիստրոսական ծրագրերի իրազործման նախադրումն է: Նախատեսվում է, որ դրան կմասնակցեն 16 հոգի պաշտպանական-անվտանգային ոլորտի գերատեսչություններից:

ՊԱՀՀ-ում մագիստրոսական ծրագրերի յուրացմանը նպաստելու համար ԱՌՀՀ-ում մշակվել ու հրատարակվել են.

• «ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշներ» երկիատոր գիտափորձագիտական ձեռնարկը,

• պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-անգլերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն բառարանը (մոտ 14000 տերմին ծավալով),

• «Ուսումնավարական անվտանգային հետազոտություններ» գիտափորձագիտական մատենաշարի 1-4-րդ հատորները:

2016 թ. նախատեսվում է «Ուսումնավարական անվտանգային հետազոտություններ» գիտափորձագիտական մատենաշարի ևս չորս հատորի լույսընծայում:

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի արդյունավետ գիտակրթական գործունեության համար անհրաժեշտ հիմքեր ապահովելու նպատակով ԱՌՀՀ-ում ստեղծվել և

գործում են անվտանգության քաղաքագիտության գծով ասպիրանտուրան, ՀՀ ԲՈՀ-ի 056 «Քաղաքական գիտություններ և միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհուրդը⁶:

ՀՀ ՊՆ ՊԱՀՅԻ-ում նախատեսվում է մագիստրանտների գիտելիքների գնահատման համակարգի ներդրում: Այն ենթադրում է գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ ստուգում: Մագիստրանտների գիտելիքների և մասնակցության կիսամյակային գնահատումը կատարվում է ըստ հետևյալ բաղադրիչների հանրագումարի՝

Բաղադրիչներ	Միավոր
Ընթացիկ քննություն	6
Ամփոփիչ քննություն	10
Դասընթացին մասնակցության ակտիվություն	4
Ընդամենը	20

Գնահատման կանոնակարգով նախատեսված է նաև պարտքերի մարման կարգը:

ՀՀ ՊՆ ՊԱՀՅԻ-ում կրթության որակի ներքին (ՊԱՀՅԻ-ի կողմից) և արտաքին (այլ կազմակերպությունների կողմից) գնահատման նպատակով կրթության որակի գնահատման ժամանակակից միջազգային փորձի հաշվառմամբ⁷ մշակվել է ՀՀ ՊՆ ՊԱՀՅԻ-ում կրթության որակի ներքին ապահովման հայեցակարգ, որով ամրագրված են որակի գնահատման ընթացակարգերը, մեխանիզմները, պատասխանատուներն ու որակի գնահատման գործընթացների վերահսկման սկզբունքները:

⁶ Ավելի հաճամանորեն տես Հ. U. Քորանջյան, Հայաստանի պաշտպանության գիտակրթական համակարգի բարձրագույն բաղադրատարրը. Ազգային ուսումնակարգական հետազոտությունների ինստիտուտի փուլային կերպավոխումը Պաշտպանական ազգային համալսարանի: «ՀԲ», 2010, հմ. 1:

⁷ Տես, օրինակ, L. Adamson, M. Becerro, P. Cullen, L. González-Vega, J. J. Sobrino, N. Ryan. Quality Assurance and Learning Outcomes. European Association for Quality Assurance in Higher Education. Helsinki, 2010; «Implementing and Using Quality Assurance: Strategy and Practice». A Selection of Papers from the 2nd European Quality Assurance Forum. European University Association. Brussels, 2008:

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում իրականացվող կրթության որակի ապահովման նպատակներն են.

1. Երաշխավորել ՊԱՀՀ-ի գիտակրթական գործունեության բարձր մակարդակը,

2. ստեղծել կանոնակարգային և կազմակերպական հիմքեր՝ կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար, ինչպես նաև ապահովել որակի ներքին և արտաքին գնահատման գործնիքացների միջև կապը,

3. խթանել ՊԱՀՀ-ում կրթության որակի շարունակական բարելավումը,

4. հիմնավորել ՊԱՀՀ-ում իրականացվող կրթության որակի ապահովման մակարդակի բարձրացմանը միտված քաղաքականության արդյունավետությունը,

5. ապահովել կրթության որակի մասին ՊԱՀՀ-ում հաշվետվությունների ներկայացումը պետական լիազոր մարմնին, ՀՀ պաշտպանության նախարարությանը, մագիստրանտներին և այլն,

6. համագործակցել կրթության որակի ապահովման ազգային և միջազգային կազմակերպությունների հետ:

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում իրականացվող կրթության որակի ապահովման խնդիրներն են.

1. ապահովել կրթական չափորոշիչների պահպանումը,

2. ապահովել կրթական ծրագրերի որակի ներքին և արտաքին գնահատումներն ու հավատարմագրումը,

3. ապահովել կրթության որակի մասին հաշվետվությունների ներկայացումն ըստ հաստատված ընթացակարգերի ու պարբերականության,

4. ապահովել կրթության որակի ապահովման գործնիքացների և ընթացակարգերի բափանցիկությունը, դրան մագիստրանտների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը,

5. ստեղծել պայմաններ և մեխանիզմներ՝ կրթության որակի շարունակական բարելավման համար,

6. ապահովել ՊԱՀՀ-ի կրթական ծրագրերի որակի համապատասխանությունը ՊԱՀՀ-ի նպատակներին, առաքելությանը, ինչպես նաև կրթության ոլորտում ՀՀ քաղաքականությանը:

ՀՀ ՊԱՀՀ-ում իրականացվող կրթության որակի ներքին ապահովման հիմնական ոլորտներն են.

1. Կրթական ծրագրերը և դասընթացները (Կրթական ծրագրերի մշտազննում և գնահատում, վերապատրաստման կարիքների գնահատում և բավարարում, վերապատրաստման արդյունավետության և ուսումնառության արդյունքների գնահատում)։

Կրթական ծրագրերի ու դասընթացների մշակման և իրականացման որակը գնահատավորում է բայ համապատասխան ուղեցույցների և ընթացակարգերի։ Կրթական ծրագրերի մշտազննման հիմնական նպատակը ծրագրի իրականացման որակի և ռեսուրսների օգտագործման աստիճանի գնահատումն է, իսկ պարբերական վերանայման նպատակը՝ ՊԱՀՀ-ի ուղղմավարական նպատակներին հասնելուն նպաստելը։

Ծրագրի վերանայումը ներառում է ինչպես քանակական (Վիճակագրական), այնպես Էլ որակական վերլուծություն։

Քանակական վերլուծությունը ենթադրում է ծրագրի հետ կապված ու ինքնազնահատման գեկույցում ներկայացվող թվային տվյալների հավաքում և վերլուծություն։

Որակական վերլուծությունը ներառում է.

ա) ինքնավերլուծություն, որը կատարում է ծրագիրն իրականացնող կառույցը,

բ) գնահատում, որը կատարում է արտաքին փորձագիտական խումբը։

2. Պրոֆեսորադասախոսական կազմը.

Այլովին պրոֆեսորադասախոսական կազմի գնահատումը կատարվում է դասախոսների որակավորումների, գիտական գործունեության և հրապարակած աշխատությունների, ինչպես նաև շարունակական մասնագիտական գարգացման վերաբերյալ տվյալների հաշվառմամբ։

3. Դասավանդումը և ուսումնառությունը.

Դասավանդման և ուսումնառության որակի գնահատումը ներառում է.

➤ պարբերական դասալսումները,

➤ մագիստրանտների կողմից դասընթացների և դասավանդման գնահատումը,

➤ առարկայական ծրագրերի գնահատումը։

4. Կրթական ծրագրերի մասնակիցների գնահատումը, ինչը ենթադրում է նրանց ընթացիկ (միջանկյալ) և եղրափակիչ գնահատման մեխանիզմների բափանցիկության ապահովում։

5. Օժանդակ ծառայությունները.

ՊԱՀՀ-ի ստորաբաժանումների անձնակազմին և կրթական ծրագրերի մասնակիցներին մատուցվող օժանդակ ծառայությունների որակի գնահատում:

6. Ուսուլսները և ենթակառուցվածքները.

Ուսուլսների և ենթակառուցվածքների (դասասենյակներ, գրադարան, լնիքերցարականներ, հաղորդատեղեկատվական միջոցներ, ուսումնական լաբորատորիաներ ու համապատասխան սարքավորանք) վիճակի և աշխատանքի որակի գնահատումը:

7. Գիտահետազոտական գործունեությունը.

ՊԱՀՀ-ի գիտահետազոտական գործունեության որակի գնահատումն ընդգրկում է հետևյալ ոլորտները.

➤ ՊԱՀՀ-ի գիտահետազոտական գործունեության կառավարումը, երկարաժամկետ ռազմավարությունն ու կարճաժամկետ ծրագրերը,

➤ գիտահետազոտական գործունեությունը ազգային և միջազգային մակարդակներում,

➤ ՊԱՀՀ-ի ստորաբաժանումների և մասնագետների գիտահետազոտական ներուժի համապատասխանությունն արդի պահանջներին,

➤ միջազգային և տեղական հետազոտական դրամաշնորհման ծրագրերին մասնակցության արդյունավետությունը,

➤ գիտահետազոտական և ուսումնական բաղադրիչների փոխկապականությունը,


➤ հետազոտությունների արդյունքների գիտագրքնական կիրառման հնարավորությունները,

➤ գիտական հրատարակությունները:

8. Հանրային իրազեկվածությունը (հասարակայնության հետ կապերի գնահատում).

ՊԱՀՀ-ի գործունեության արդյունավետության ապահովման տեսանկյունից կարևորվում են հասարակայնության հետ կապերը, ինչը ենթադրում է. ՊԱՀՀ-ի գործակցություն պետական և հասարակական կառույցների, ԶԼՄ-ների հետ.

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում կրթական գործընթացների որակի գնահատման համակարգը ներառում է արտաքին և ներքին սուբյեկտների (կառույցներ), որոնք փոխլրացնում են միմյանց՝ կրթական գործընթացի օբյեկտիվ պատկերն ստանալու և արդյունավետ բարեփոխումներ իրականացնելու նպատակով անհրաժեշտ մոտեցումներ մշակելու համար (տես գծ. 1):



Գծապատկեր 1. ՀՀ ՊՆ ՊԱՀՅԻ-ում կրթական գործընթացների
որակի գնահատման համակարգը

ՀՀ կրթական համակարգի արդի բարեփոխումների համատեքստում հատկապես կարևորվում է ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի կրթական գործունեության գնահատման գործում արտաքին սուբյեկտների ներգրավումը. նրանք ոչ միայն կապահովեն ՊԱՀՀ-ում իրականացվող կրթական գործընթացների վերաբերյալ արտաքին տեսակետների ու գնահատականների պարբերական ստացումը, այլև կնայաստեն ՊԱՀՀ-ի և արտաքին կրթական ու կառավարչական կազմակերպությունների միջև կապի ամրապնդմանը: Այդ կապը կնայաստի, որ ՊԱՀՀ-ում իրականացվող կրթական գործընթացները համապատասխանեն ազգային անվտանգության խնդիրներին, աշխատաշուկայի ու հետազոտությունների հենքի վրա իրականացվող կրթության (*research-based teaching*) պահանջներին:

Այսպիսով՝ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ստեղծումն ու գործառումը հնարավորություն կտան մասնագիտորեն դիմակայելու ՀՀ ազգային անվտանգության ապահովման համակարգին ուղղված ներքին և արտաքին մարտահրավերներին, ինչպես նաև համարժեք կերպով արձագանքելու միջազգային և ազգային մակարդակներում բարձրագույն կրթության փոխակերպման ու զարգացման արդի միտումներին: Անվտանգային քաղաքագիտության բնագավառում երկրորդ և երրորդ աստիճանների բարձրագույն կրթության իրականացումը կարող է էապես նպաստել ՀՀ-ում ռազմավարական մակարդակի առաջավարների պատրաստմանը:

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-Ի ԳԻՏԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՋԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸՑ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ա. Կ. ՅԱԼԱՆՈՒԶՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիրական հանդեսի գլխավոր իսմրագրի պետակալ
Դ. Ս. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ, պաշտոնաքող գնդապետ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետի պետակալ՝ «Հայկական բանակ» ռազմագիրական հանդեսի գլխավոր իսմրագրի



ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ
ԳԻՏԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԴԵՐԸ
ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտության համակարգում գիտակատարական գործունեության դերը պայմանավորված է գիտության զարգացման օրինաչափորյուններով, որոնցից յուրաքանչյուրը որոշակի պահանջ է ներկայացնում այդ գործունեությանը: Այսպես,

1) գիտության զարգացումը պայմանավորված է հասարակական-պատմական պրակտիկայի պահանջմունքներով, որոնք գիտության զարգացման գլխավոր շարժիչ ուժն են, զարգացման աղբյուրը¹: Գիտության զարգացման յուրաքանչյուր փոլում անհրաժեշտ է ձևակերպել այդ պահանջմունքները, այսինքն՝ գիտական պրոբլեմ: Գիտական պրոբլեմի ձևակերպումը և այդ մասին գիտնականների հանրության տեղեկացումը գիտահրատարակական գործունեության առաջնահերթ խնդիրներից են,

2) գիտության հասկացություններն ու գաղափարները, սկզբունքներն ու տեսությունները, մեթոդներն ու հնարները զարգանում են ժառանգորդության սկզբունքով, և իրականության ճանաչողությունը՝ որպես ներ-

¹ Stein «Наука». «Философская энциклопедия», т. 3. М., 1964, сс. 568–569:

քուստ միասնական նպատակառողված գործընթաց, անխօնի է²: Գիտության զարգացման ավելի բարձր աստիճանին համապատասխանող գիտելիքը ծեռք է բերվում նախորդ աստիճանում կուտակված բոլոր արժեքավոր հասկացությունների ու զաղափարների, սկզբունքների ու տեսությունների, մեթոդների ու հնարների կիրառմամբ և դրանց հիմքի վրա: Գիտելիքների ժառանգորդությունը ապահովվում է ինն և նոր կաղըների, ուսուցիչների և աշակերտների փոխորդության միջոցով: Գիտելիքի ժառանգորդության ատրիբուտներից է գիտահրատարակչական գործունեությունը, որը արժեքավոր գիտելիքի ձևակերպման, կուտակման և ինչպես տարածության, այնպես էլ ժամանակի մեջ սերունդ գիտանցման կարևոր միջոց է,

3) գիտության բոլոր ճյուղերը^{*} փոխկապված են և փոխազդում են, այսինքն՝ հաճախ անհրաժեշտ է լինում, որ մի գիտության առարկան ուսումնասիրեն այլ գիտությունների³: Դրա շնորհիվ անհրաժեշտ պայմաններ են ստեղծվում տարրեր երևույթների էության և դրանց օրինաչափությունների ավելի ամբողջական ու խորությամբ պարզման համար: Գիտության բնագավառների փոխկապվածությամբ են պայմանափորված գիտության պատմական զարգացման որոշ առանձնահատկություններ, մասնավորապես՝ առանձին բնագավառների առաջացման հաջորդականությունը: Գիտահրատարակչական գործունեության շնորհիվ ապահովվում է տարրեր գիտական բնագավառների մասնագետների միջև գիտելիքի փոխանակում և տարրեր բնագավառների փոխազդություն,

4) գիտության զարգացման նախապայմաններն են՝ քննադատության ազատությունը, գիտության վիճելի հարցերի անկաշկանդ քննարկումը, տարրեր տեսակետների ազատ արտահայտումն ու բախումը: Դրա շնորհիվ հայթահարվում է ուսումնասիրության օրիենտի մասին նախնական տեսակետների անհստափելի միակողմանիւթյունը և մշակվում է իրականության ավելի համապատասխանող բազմակողմանի հայեցակետ⁴: Գիտահրատարակչական գործունեությամբ ապահովվում են գիտական տեսակետների ձևակերպումը, տարածումն ու փորձաքննությունը, ինչը

² Տես նոյն տեղում:

* Ընդհանուր գիտության ճյուղերը ևս կոչվում են գիտություն (ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա, փիլիսոփայություն, պատմություն և այլն):

³ Տես նոյն տեղում:

⁴ Տես նոյն տեղում:

նպաստում է գիտական բանավեճերում ու քննարկումներում տարրեր գիտնականների, տարրեր գիտական դպրոցների ներկայացուցիչների ավելի լայն ներգրավմանը և հետազոտվող պրոբլեմների վերաբերյալ գիտական ճշմարտության որոնման ու հաստատմանը:

Այսպիսով՝ գիտական ճանաչողությունը գիտահետազոտական գործունեության արդյունք է, որն ունի երկու փուլ.

ա) գիտելիքի ստեղծում,

բ) գիտելիքի ձևակերպում-տարածում:

Երկրորդ հենց գիտահրատարակչական գործունեության գլխավոր նպատակն է:

ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-Ի ԳԻՏԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (ԱՌՀԻ) և ԱՌՀԻ-ի Գիտահրատարակչական կենտրոնի (ԳՀԿ) կանոնադրությունների համաձայն՝ ԳՀԿ-ն բաղկացած է «Հայկական բանակ» ռազմավարական հանդեսի խմբագրությունից⁵: Այն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրության և վերադասի հրամանների ու կարգադրությունների համաձայն՝ նպաստելով.

– ՀՀ ԶՈՒ-ում հայրենական ու համաշխարհային առաջավոր ռազմագիտական մտքի, գիտելիքների ու փորձի տարածմանը,

– ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի բարոյահոգեբանական ու գինովորական դաստիարակությանը, հայրենասիրության վեհ զգացմունքի սերմանմանը,

– Ինստիտուտում կատարվող ռազմավարական հետազոտությունների արդյունքների ձևակերպմանն ու ներկայացմանը ՀՀ ռազմաքաղաքական դեկազմարությանը, ինչպես նաև պետական կառավարման համակարգի շահագրգիռ մարմինների դեկազմարներին,

⁵ Տես ՀՀ Պաշտպանության նախարարի 2007 թ. հունվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կանոնադրությունը հաստատելու մասին» հմ. 5 հրամանը, նաև՝ ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ-պաշտպանության նախարարի ռազմաքաղաքական գծով խորհրդականի 2007 թ. փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Գիտահրատարակչական կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին» հմ. 8 հրամանի հավելվածը:

- ՀՀ ԶՈՒ-ում գիտական կադրերի պատրաստմանը,
- բանակ-հասարակություն կապի սերտացմանը,
- հայերենի ռազմագիտական տերմինարանության մշակմանը, հասկացութատերմինարանական ապարատի զարգացմանը:

Ըստ այդմ Կենտրոնը լուծում է հետևյալ նպատակային խնդիրները.

ա) նպաստում է ՀՀ Զինված ուժերի անձնակազմի պաշտպանական-անվտանգային ու մասնագիտական գիտելիքների հարստացմանը, ՀՀ և օտարերկրյա պետությունների զինված ուժերի առաջավոր փորձի ու կուտակված գիտելիքների ընդհանրացմանը և տարածմանը, հայկական ռազմագիտական մտքի զարգացմանը,

բ) խմբագրում և հրապարակում է պաշտպանական-անվտանգային բնագավառին առնչվող գիտահետազոտական-վերլուծական նյութեր, առաջին հերթին՝ ՀՀ պաշտպանական ոլորտում իրագործվող բարեփոխումների նպատակները, խնդիրները, ընթացքը լուսաբանող վերլուծական-փորձագիտական հոդվածներ,

գ) նպաստում է ՀՀ-ում ռազմավարական որոշումների ընդունման առաջավոր (ինչպես արևմտյան, այնպես էլ ոռուսաստանյան և ՀԱՊԿ-ի անդամ պետությունների) մշակույթի իմաստավորմանն ու արմատավորմանը,

դ) մասնակցում է ռազմական գիտության և պաշտպանական-անվտանգային քաղաքագիտության ոլորտներին վերաբերող՝ հայերենի տերմինարանության տեսական մշակմանն ու կիրառական գիտափորձաբնությանը,

ե) ծավալում է անհրաժեշտ գործունեություն՝ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության և Ինստիտուտի ղեկավարության հրամանների ու հրահանգների⁶:

Այդ խնդիրների լուծման ճանապարհին Կենտրոնը.

ա) մասնակցում է ՀՀ պաշտպանական քաղաքականությանը, ազգային անվտանգության ռազմավարությանը և պաշտպանական-անվտանգային քաղաքականության կատարելագործմանն ուղղված առաջարկություններին վերաբերող տեղեկատվական-վերլուծական նախագծերի գիտական խմբագրմանը, գիտահրատարակչական մշակմանն ու հրապարակմանը,

բ) ռազմավարական հետազոտությունների արդյունքներն ամփոփող գիտավերլուծական գեկույցների խմբագրման ու հրատարակման միջոցով

⁶ Տես նոյն տեղում:

մասնակցում է ազգային անվտանգության ռազմավարության վերաբերյալ Ինստիտուտի կողմից ՀՀ բարձրագույն ռազմաքաղաքական դեկավարությանը, առաջին հերթին՝ ՀՀ ԶՈՒ-ի Գերագույն գլխավոր հրամանատարին ու Պաշտպանության նախարարին ներկայացվող գիտագործնական խորհրդատվություններին և առաջարկությունների մշակմանը,

գ) հրապարակում է Ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների արդյունքներս ամփոփող և պաշտպանական-անվտանգային բնագավառին վերաբերող այլ գիտավերլուծական աշխատություններ, մասնագիտական գիտաժողովների նյութեր և տեղեկատվական-վերլուծական նպատակային ժողովածուներ,

դ) կատարում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ՝⁷:

Կենտրոնը հրատարակում է երկու պարբերական «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսը և դրա «Աշխատանքային տեսրեր» հավելվածը:

«Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ստեղծվել է 1994 թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ այն ժամանակվա Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հրամանով՝ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցի առաջարկությամբ: Հանդեսի ստեղծման բարդ ու պատվավոր աշխատանքը հանձնարարվել է քաղաքական գիտությունների դրկտոր գնդապետ Հայկ Սարգսի Քորանջյանին, որը ՀՀ ՊՆ-ում ռազմական քաղաքականության վարչության հիմնադիրն էր և ՀՀ-ում առաջին «Ռազմական քաղաքականության հիմունքները» մշակողը:

Եռալեզու (հայերեն՝ ռուսերեն և անգլերեն ամփոփումներով) «Հայկական բանակ» հանդեսն ընդգրկվեց Բարձրագույն որակավորման հանձնաժողովի դրկտորական պարբերականների ցուցակում և շատ արագ իր ուրույն տեղը գրավեց այլ գիտական պարբերականների շարքում՝ հեղինակություն վաստակելով հանրապետության գիտական շրջաններում: Դրան էապես նապաստեց այն հանգամանքը, որ հանդեսում գործում է գիտախորհրդատվական խորհուրդ, որում ընդգրկված են տարբեր ոլորտների հայրենական հեղինակավոր գիտնականներ, և որի միջոցով կատարվում է յուրաքանչյուր հոդվածի գիտական փորձաքննություն:

Հանդեսի թեմատիկ ընդգրկումը լայն է. դրանում գետեղվում են գիտական հրապարակումներ, որոնք վերաբերում են ռազմական գործի ամենատարբեր ոլորտներին, ինչի վկայությունն են «Ռազմավարություն», «Մար-

⁷ Տես նոյն տեղում:

տավարություն և օպերատիվ արվեստ», «Զորբերի կառավարման ավտոմատացված համակարգեր», «Մարտական պատրաստում», «Մպառագինություն և ռազմական տեխնիկա», «Սպայական կորպուս. կադրերի պատրաստում», «Ռազմական ճարտարագիտություն», «Զինվորական հոգեբանություն և դաստիարակություն», «Ռազմական պատմություն», «Ռազմագիտական տերմինարանություն» («Համարի բառարան») և 60-ից ավելի այլ խորագրեր: Հանդեսի գոյության 20 տարվա ընթացքում նրան հեղինակել են մոտ 400 մասնագետ ինչպես ԶՈՒ-ից, այնպես էլ այլ ուժային կառույցներից, քաղաքացիական ոլորտի գիտական ու բուհական, այդ թվում՝ արտասահմանյան հաստատություններից:

Հանդեսի համարներն առաքվում են ՀՀ-ում օտարերկրյա և արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ, ինչպես նաև ՀԱՊԿ-ի Միացյալ շտար և Մարշալի անվան եվրոպական անվտանգային հետազոտությունների կենտրոն: Արտասահմանյան մասնագետները ևս բարձր են գնահատում հանդեսի գիտական ու հրատարակչական մակարդակը, ինչն ապացուցվում է այն բանով, որ հանդեսի հեղինակների թվում են ռազմագետ-փորձագետներ ՌԴ-ից, ԱՄՆ-ից, Գերմանիայից, Իսրայելից, Թուրքիայից և այլ պետություններից, ընդամենը նրանց հոդվածներն ամբողջությամբ են հրապարակվում նաև բնագրի (ռուսերեն կամ անգլերեն) լեզվով:

Հանդեսը ժամանակին և պատշաճ կերպով արձագանքում է հանրապետության, պաշտպանության նախարարության դեկավարության նախաձեռնություններին՝ իր ընթացիկ գործունեության մեջ մշտապես դեկավարվելով պաշտպանության նախարարության կողեգիայի որոշումներով, Պաշտպանության նախարարի և Խնամատուտի պետի հրամաններով, կարգադրություններով ու ցուցումներով: Մասնավորապես՝ 2008 թվականից հանդեսի յուրաքանչյուր համար նվիրվում է ԶՈՒ-ի կենսագործունեության կոնկրետ ոլորտում իրագործվող պաշտպանական բարեփոխումներին, ընդամենը այդ փորձագիտական-վերլուծական նյութերը ներառվում են զորքերի մարտական պատրաստման ծրագրերում:

«Հայկական բանակ» ՌԴ-Հ «Աշխատանքային տեսրեր» գիտակիրառական հավելվածը, որի նախաձեռնողն ու խմբագրական խորհրդի նախագահը ՀՀ ազգային անվտանգության առաջին ռազմավարության նախագծի գիտական դեկավար, ՀՀ ՊՆ ԱԱՀ-ի պետ, քաղաքական գիտությունների որկույթը (ՌԴ), քաղաքագիտության պլոտեստը, ՌԴ Ռազմական գիտութ-

յունների ակադեմիայի ընտրված խսկական անդամ, հակաահաբեկչության գծով գիտական փորձագետ (ԱՍՆ), ԱՍՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի հրավիրված առաջատար պրոֆեսոր Հ. Ս. Ջոքանջյանն է, լույս է տեսնում 2007 թվականից՝ տարին 4 համար պարբերականությամբ, 120 էջ ծավալով: Դրանում հրապարակվում են՝

– ուսումնավարական անվտանգային-քաղաքագիտական հետազոտություններ (կոլեկտիվ մենագրություններ),

– միջազգային ուսումնավարական ֆորումների նյութեր,

– մենագրական հետազոտություններ:

Կենտրոնը հրատարակում է նաև «Ուսումնավարական անվտանգային հետազոտություններ» մատենաշարը (արդեն լույս է տեսել 4 հատոր), որի նպատակն է նպաստել ՀՀ-ում անվտանգային հետազոտությունների զարգացմանը, անվտանգային քաղաքականության մշակման համար ուղենիշային համակարգի ձևավորմանը, անվտանգային-քաղաքագիտական և ուսումնավարական որոշումների ընդունման մշակույթի լավագույն նմուշների սերմանմանը: Մատենաշարը կարևոր նշանակություն ունի նաև անվտանգային հետազոտությունների ոլորտում իրականացվող կրթական ծրագրերի համար, քանի որ և՛ դասախոսներին, և՛ ուսանողներին հնարավորություն է տալիս ձեռք բերելու Հարավային Կովկասում տարածաշրջանային անվտանգության դիմամիկայի վերաբերյալ խորքային գիտելիքների⁸:

Կենտրոնը, համագործակցելով Հայաստանի քաղաքական գիտության ասոցիացիայի հետ, լույս է ընծայել պաշտպանական-անվտանգային տերմինների հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն բառարանը (մոտ 3000 պարզ և բաղադրյալ տերմիններ), որում տրվում են նաև հայերեն լեզվով բացատրություններ⁹, տպագրության է հանձնվել նմանատիպ բառարան՝ 14000-ից ավելի տերմիններ ծավալով: Հարք է նշել, որ բառարանների խմբագրական խորհրդում ընդգրկված են ՀՀ ուսումնավարական ու ուսումնական ոլորտների, հայերենի, ռուսերենի և անգլերենի առաջատար մասնագետներ: Եռալեզու բացատրական բառարանների հիմնական նպատակներն են՝

⁸ Տես «Ուսումնավարական անվտանգային հետազոտություններ (գիտափորձագիտական մատենաշար)», հ. 1: Ե., 2014, էջ 13:

⁹ Տես Հ. Ս. Ջոքանջյան, Ա. Ե. Սարգսյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն բառարան: Ե., 2012, 800 էջ:

– հստակեցնել ՀՀ տարբեր գերատեսչությունների մասնագետների պատկերացումներն ու բնբռնումները և միօրինակացնել տերմինները, այդ թվում՝ հնարավորինս զերծ մնալ հոմանիշների կիրառումից, ինչը հույժ կարևոր է ռազմական-պաշտպանական ոլորտում, հատկապես՝ հրանաների արձակման ու կատարման համար մարտական իրադրությամբ պայմանավորված ժամանակի սղության պարագայում,

– մեծացնել արտասահմանյան անգլա- և ռուսախոս գործընկերների հետ շփումների արդյունավետությունը՝ հասկացութային-տերմինաբանական մակարդակով ընկալումների նույնացման շնորհիվ,

– ՀՀ պաշտպանական-քաղաքական և քաղաքագիտական միջավայրում արմատավորել տվյալ ոլորտում եղած միջազգային առաջավոր մշակութային ստանդարտները,

– շարունակել գիտական հիմքերի վրա հայերենի ռազմագիտական տերմինաբանության զարգացումը՝ ապահովելով համակարգայնությունը,

– համապատասխանեցնել ռազմական կրթության բնագավառում տարբեր ծրագրերի մասնակիցների համար արտասահմանյան կրթական ծրագրերում և հայերենում կիրառվող տերմինները, ինչը կնպաստի ՀՀ-ում անվտանգային-քաղաքագիտական ու ռազմական կրթության ոլորտի ավելի արագ և արդյունավետ զարգացմանը,

– գիտակիրառական հիմքեր ստեղծել տվյալ աշխատանքի հետազ ընդլայնման՝ պաշտպանական ոլորտի տերմինահասկացութային քազայի զարգացման ու կատարելագործման համար, ինչը հատկապես կարևոր է ԱՌՀ-ի փոխակերպմանը պաշտպանական ազգային համալսարանի ստեղծման հաջող ընթացքի ապահովման տեսակետից¹⁰:

Կենտրոնը հրատարակել է նաև անվտանգային քաղաքագիտության և ռազմական հոգեբանության գծով 6 մենագրություն¹¹ և 1 փորձագիտական-ուսումնական ձեռնարկ¹²:

¹⁰ Տես նույն տեղում:

¹¹ Տես Հայկ Ս. Քորիանջյան, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում: Ե., 2008, 604 էջ, *Անյնիկ՝ Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ*. ԽՍՀՄ վերակառուցում – Կարարադ, Հայաստան, Անդրկովկաս – Աքունաստան: Ե., 2009, 656 էջ, *Անյնիկ՝ Հակամարտության երեսադրագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմնարկները*: Ե., 2010, 764 էջ, *Վարդարյան, Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը*:

**ՊԱՀՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ԳԻՏԱՀՐԱՍՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՓՈՐՁԻ
ՀԱՄԵՍՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարան (ՊԱՀՀ)
(National Defense University)**

ՀՀ ՊՆ ԱՌՀԲ-ն ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՊԱՀՀ) է կերպավիճակում ամերիկյան մոդելով, այսինքն՝ ԱՄՆ-ի ՊԱՀՀ-ի օրինակով: Տվյալ մոդելի մշակումն իր առաջարկությամբ և այդ ժամանակ ՀՀ Պաշտպանության նախարար, ներկայումս ՀՀ Նախարար Սերժ Սարգսյանի հրամանով կատարել է քաղաքական գիտությունների դրկուր, պրոֆեսոր, գեներալ-մայոր Հայկ Քորանջյանը¹³: Հետևաբար՝ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Գիտահրատարակչական կենտրոնի (ԳՀԿ) գարգացման հեռանկարները զնահատելու համար լավագույն միջազգային փորձը ԱՄՆ-ի ՊԱՀՀ-ի հրատարակչատան¹⁴ գործունեությունն է:

ԱՄՆ-ի ՊԱՀՀ-ի հրատարակչատան նպատակը պաշտպանության և ազգային անվտանգության ոլորտին առնչվող կենսականորեն կարևոր գիտական գիտելիքի հրատարակումն ու տարածումն է: Այդ գիտելիքը նախատեսված է պաշտպանության և քաղաքականության ոլորտներում որոշում կայացնողների, ինչպես նաև մասնագիտական գինվորական կրթություն ստացողների ու խնդրությունների առարկայով հետաքրքրվող հասարակության համար:

Հրատարակչատան գլխավոր արտադրանքը «Սիացյալ ուժերի եռամսյա պարբերական» (ՄՈՒԵՊ) («Joint Force Quarterly» (JFQ)) հանդեսն

Ե., 2009, 284 էջ, նոյեմբերի՝ Մարտական գործունեության հոգերանություն: Ե., 2009, 436 էջ, Զ. Ասարյան, Զինվորական կարգապահության ամրապնդման հիմնախնդիրները (դասախոսությունների ժողովածու): Ե., 2013, 104 էջ:

¹² Տես «Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները»: Ե., 2013, մաս 1, 534 էջ, մաս 2, 416 էջ:

¹³ Տես Հ. Ս. Քորանջյան, Պաշտպանական կրթության բարեփոխմամբ՝ ուսումնական փոփոխությունների կառավարումը Հայաստանում «խելացի ուժի» զարգացման տեսանկյունից: «Աշխատանքային տեսրեր», 2012, հմ. 4:

¹⁴ Տես հրատարակչատան պաշտոնական կայքը «National Defense University Press» (<http://ndupress.ndu.edu/Home.aspx>):

է: Հանդեսի հիմնական նպատակը, բացի զինծառայողների շարունակական կրթությանը և հետազոտական աշխատանքին նպաստելուց, աջակցությունն է ռազմավարական որոշումների ընդունման գործում պաշտպանության նախարարին և Շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահին՝ ռազմավարական հետազոտությունների արգասիքների տրամադրմամբ: Այսպիսով՝ հանդեսը նախատեսված է պրոֆեսիոնալների համար:

ՈՒշագրավ են այն հիմնական չափանիշները, ըստ որոնց՝ «ՍՈՒԵՊ» համրեսի խմբագրությունը գնահատում է հոդվածները: Դրանք են.

– թեմայի համապատասխանություն Շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահի սահմանաձև առաջնահերթություններին,

– հոդվածի համապատասխանություն ազգային անվտանգության ոլորտի պրոֆեսիոնալների շարունակական կրթության խնդիրներին,

– հոդվածի համապատասխանություն ապացուցման և փաստարկման գիտական չափանիշներին,

– հոդվածի հետաքրքրականություն:

Ընդ որում, «ազգային անվտանգության ոլորտի շարունակական կրթություն» հասկացությունն ընկալվում է լայն իմաստով՝ զորքերի ծառայությանը, անվտանգությանն ու կառավարմանը վերաբերող բոլոր հարցերի ներառմամբ: Ինչպես նշվում է հրատարակչատան կայրում, հազվադեպ է պատահում, որ հոդվածը մերժվի հանդեսի քենատիկ սահմաններից դուրս լինելու պատճառով: Ավելի հաճախ հոդվածները մերժվում են, որովհետև չեն դիմանում «Հետո՞ ինչ» («So what?») հարցով ստուգմանը: Այսինքն՝ նույնիսկ եթե հոդվածում ամեն ինչ ճիշտ է՝ և՛ քննադատությունը, և՛ փաստարկները, արդյոք հեղինակն առաջարկում է հստակ լուծում կամ «ընթերցողին զինում է կիրառական գիտելիքով»: Սա է կարևորը, որովհետև «մարդուն խնդրելով ընթերցել 3000–5000 բառանց հոդված՝ մեծ բան ենք խնդրում», և ընթերցանությունից հետո նա պետք է իրեն ավելի «զարգացած» զգա՞ կարդացածն ինչ-որ կերպ կիրառելու հնարավորություն ստանալու միջոցով: ՈՒստի խմբագրությունն ապագա հեղինակներին խորհուրդ է տալիս պրոբլեմներ առաջ քաշելիս լինել ակտիվ և նախաձեռնող՝ չկաշկանդվելով ո՛չ ծառայողական կարիերայի մասին մտահոգությամբ, ո՛չ սովորական մտածելակերպի օրենքներով ու դրույթներով, ո՛չ էլ տպագրված հայեցակարգներով, որովհետև «Շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահը խրախուսում է պրոֆեսիոնալ մակարդակով երկխոսությունն

ու քննադատությունը՝ առաջնորդվելով «նոր գաղափարները խնայում են կյանքեր, ռեսուրսներ և պահպանում են ազատությունը» (*new ideas save lives, resources and liberty*) կարգախոսով:

«Հայկական բանակ» Ո.ԳՀ խմբագրությունը ևս, որպես կանոն, հոդվածները գնահատելիս առաջնորդվում է նման չափանիշներով: Այդուհանդերձ, ամերիկյան փորձի հաշվառմամբ, նախապատվություն պետք է տրվի այն հոդվածներին, որոնցում արվում են նորամուծական առաջարկություններ և փոխանակման նպատակով ներկայացվում է մասնագիտական փորձը: Այսինքն՝ հոդվածներին ներկայացվող չափանիշների խստացմանը զուգահեռաբար պետք է կատարելագործվեն հեղինակների հետ տարրող աշխատանքների մերողները, մասնավորապես՝ պետք է ավելի ակտիվ և արյունավետ կերպով օգնել հետաքրքիր գաղափարների արտահայտող հեղինակներին՝ անհրաժեշտության դեպքում ձևակերպելու իրենց ասելիքը: Սա, իր հերթին, պահանջում է բարձրացնել ՊԱՀՀ-ի ԳՀՀ անձնակազմի մասնագիտական պատրաստականության մակարդակը:

Օգտակար ենք համարում «Հետո՞» ինչ՝ հարցով հոդվածների ստուգման սկզբունքի կիրառումը: Առաջարկում ենք նաև մեր ՉՈՒ-ում նույնացնելու առաջնորդվել «նոր գաղափարները խնայում են կյանքեր և ռեսուրսներ» կարգախոսով՝ խրախուսելով նորամուծական առաջարկություններով սպայակազմի հանդես գալն ու «Հայկական բանակ» Ո.ԳՀ-ի համար հոդվածներ հեղինակելը:

Նոր գաղափարների առաջքաշումը խրախուսելու նպատակով ԱՄՆ-ի ՊԱՀ-ի «ՍՈՒՖԵՊ» հանդեսն ամեն տարի անցկացնում է փորձնական հոդվածների (*essay*) մրցույթ, որի նախաձեռնողներն են ԱՄՆ-ի Պաշտպանության նախարարը և Ծուաբների պետքի միացյալ կոմիտեի նախագահը: Մրցույթին կարող են մասնակցել պրոֆեսիոնալ ռազմական կրթություն ստացող բոլոր անձինք, այդ թվում՝ օտարերկրացիներ: Մրցուրային հոդվածում պետք է արձարծվեն ազգային անվտանգության տեսանկյունից կարևոր հարցեր: Մասնակցությունը խթանելու նպատակով հաղթողների (1-3-րդ տեղեր) համար սահմանվում է դրամական պարզեցում շեշտում է նաև, որ մրցույթին մասնակցությունը համարանի ունկնդրի խոսքն անձամբ Պաշտպանության նախարարի համար լսելի դարձնելու և գործընկերների շրջանում հարգանք վաստակելու բացառիկ հնարավություն է: Մրցույթում հաղթած հոդվածները տպագրվում են «ՍՈՒՓ» հանդեսում:

Բացի «ՄՈՒԵՊ» հանդեսից, ԱՄՆ-ի ՊԱՀ-ի ռազմագիտական հրատարակչառունը լույս է ընծայում նաև գրքեր, համառոտ վերլուծական տեսություններ (*policy briefs*), հասուլ թողարկումներ (*occasional papers*), օրինակների վերլուծություն* (*case studies*), որոնք նպաստում են գիտական հետազոտությունների կատարմանը, ինչպես ներհամալսարանական ուսումնական գործընթացին, այնպես էլ ունկնդիրների ինքնակրթությանը, խթանում են ստեղծագործական միտքը, բանավեճների ու քննարկումների առիթ տալիս:

ԱՄՆ-ի ՊԱՀ-ի կազմում եղած յուրաքանչյուր կառուցվածքային միավորի** (ինստիտուտ, կենտրոն, քոլեջ) աշխատանքի արգասիքը հրատարակվում է առանձին պարբերականում: Դա բացատրվում է այն հաճախանգույն, որ ՊԱՀ-ի այդ օրականերից յուրաքանչյուրում կատարվող հետազոտություններն ունեն ուրույն թեմատիկ ուղղվածություն և առանձնահատուկ մեթոդաբանություն, և դրանց արգասիքը մեկ պարբերականում գետեղելը նպատակահարմար չէ: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ը նույնպես բաղկացած է լինելու ինստիտուտներից ու կենտրոններից, որոնցից յուրաքանչյուրը կարող է իր աշխատանքի արգասիքը հրատարակել առանձին պարբերականում: Այսինքն՝ կարելի է ակնկալել, որ ՊԱՀՀ-ի պարբերականների թիվը կաճի:

Պ.Պ. ՊՆ «Վոյեննայա միսլ» պարբերականը

Ուսուաստանի Դաշնության պաշտպանության նախարարության հիմնական ռազմատեսական պարբերականը՝ «Վոյեննայա միսլ» («Ուսուաստան միտք»), լույս է տեսնում ամիսը մեկ անգամ, 80 էջ ծավալով: Այն

* Օրինակների վերլուծությունը ուսուցման և հետազոտության մեթոդ է, որի Էլույթը կանկերտ պրոբլեմային իրավիճակի (մասնավոր դեպքի) մանրամասն և բազմակողմանի վերլուծությունն է: Համաշխարհային կրթական պրակտիկայում օրինակների վերլուծության մեթոդը լայնորեն տարածվել է 1970–1980-ական թթ.: Արևմտության ուսուցման տիպային օրինակների վերլուծությանն է հասկացվում ուսումնական ժամանակի միջինում 35–40 %-ը (տես, օրինակ, Բ. Է. Անդյոսև. Կեյս-մեթոդ ու ինստրումենտ ֆորմացան կոմպետենտությունների մասին. Հայաստան, 2010, № 4 (andjusev.narod.ru/b/Case-study.doc)):

** Օրինակ՝ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (*Institute for National Strategic Studies (INSS)*), Զանգվածային ոչնչացման գեներերի հետազոտության կենտրոնը (*Center for the Study of Weapons of Mass Destruction (CSWMD)*) Զինված ուժերի արդյունաբերական բողեջը (*Industrial College of the Armed Forces (ICAF)*) և այլն:

նախատեսված է ՈԴ- ԶՈՒ-ի բարձրագույն և ավագ հրամկագմի, ՈԴ- ՊՆ զիտահետազոտական հաստատությունների մասնագետների, ուղամական ակադեմիաների, համալսարանների և ինստիտուտների պրոֆեսորադասախոսական կազմի և սպա ունկնդիրների, պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների ղեկավարների համար:

Ներկայում ամսագրի առջև դրված խնդիրներն են.

– 20-րդ և 21-րդ դր. պատերազմներում և զիտահետազոտություններում ուղամական զործողությունների, հատկապես՝ ուղամավարության և օպերատիվ արվեստի հարցերին առնչվող փորձի վերլուծությունը և ապագա պատերազմների հնարավոր բնույթի զիտական կանխատեսումը,

– ուղամագիտության, ինչպես նաև հասարակական, քննական և տեխնիկական զիտությունների առանձին բնագավառների և պաշտպանական տեսանկյունից դրանց հետազոտական մերուժանության լուսաբանումը,

– սպառազինության, ուղամական տեխնիկայի և ուղամատեխնիկական համագործակցության զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ տեղեկույթի հրապարակումը,

– զորքերի օպերատիվ պատրաստման, հատկապես՝ օպերատիվ-ուղամավարական զորավարժությունների փորձի ընդհանրացումը,

– ուղամական պատմության և ուղամական մտքի համաշխարհային պատմության առավել կարևոր էջերի լուսաբանումը,

– ուղամական ուսուցման ու դաստիարակության պրոբլեմների լուծման նպատակով ԶՈՒ-ի անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստման վերլուծությունը,

– պետության ուղամական կազմակերպվածքի զործունեության նորմատիվ-իրավական ապահովման վերլուծությունը¹⁵:

Այսախով՝ «Վոյեննայա միավի» խմբագրությունից պահանջվում է նպաստել ուղամագիտության արդիական պրոբլեմների լուծմանը: Հարկ է նշել, որ «Հայկական բանակ» ուղամագիտական հանդեսը ևս ունի նման սկզբունքով աշխատելու որոշակի փորձ. 2008 թվականից ի վեր նրա յուրաքանչյուր համար նվիրվում է ՀՀ ԶՈՒ-ի կենսագործունեության ոլորտներից մեկում իրագործվող պաշտպանական բարեփոխումների նպատակների, խնդիրների և ընթացքի վերլուծությանը: Տվյալ ոլորտում բարեփոխումների

¹⁵ Տես ամսագրի կայքէջը՝ «Военная мысль». Военно-теоретический журнал (<http://vm.milportal.ru/>):

իրականացման համար պատասխանատու պաշտոնյաները, դառնալով թեմատիկ հոդվածի հեղինակ, «Հայկական բանակի» հետ համագործակցելու շնորհիվ ավելի լավ են պատկերացնում տիրող իրավիճակը, բարեփոխումների նպատակը և դրան հասնելու ուղիները: Բացի այդ, նրանց հոդվածներն ընթերցելու շնորհիվ մեկ այլ պաշտոնյա, որը պատասխանատու է պաշտպանական բարեփոխումների այլ ոլորտի համար, ավելի լավ է պատկերացնում համագործակցության ընդհանուր եզրեր գտնելու ճանապարհները: Որպես արդյունք՝ «Հայկական բանակ» հանդեսը նպաստում է պաշտպանական բարեփոխումների արդյունավետ իրականացմանը:

«Վոյեննայա միզ» ամսագրի արտասահմանյան ընթերցողների համար երեք ամիսը մեկ անգամ անգերեն լեզվով լույս է ընծայվում «Սիլիքարի սոռութ» (*Military Thought*) ժողովածուն, որում գետեղվում են ուսւերեն տարբերակի առավել հետաքրքրական հոդվածները: Դա հնարավորություն է տալիս ոչ միայն ամսագիրը դարձնելու արտասահմանյան մասնագետների համար ավելի մատչելի և ընկալելի, այլև գովազդելու ուսուաստանյան ուազմական գիտությունն ու պրակտիկան, սպառազինությունն ու ուազմական տեխնիկան:

Ռումինիայի ՊԱՀ-ի գիտահրատարակչական գործունեությունը

Ռումինիայի «Կարոլ I Առաջին» պաշտպանական ազգային համալսարանը պատրաստում է անվտանգության և ազգային պաշտպանության ոլորտի գիտության և քաղաքացիական մասնագետների, պետական համապատասխան մարմինների պատվերով կատարում է նշված ոլորտներում գիտական հետազոտություններ¹⁶: Համալսարանում ամբողջական և համալիր ուսումնական գործընթացի նպատակը գիտական գործիքակազմի և մեթոդաբանության համատեղումն է՝ խաղաղության, ճգնաժամի և պատերազմի ժամանակ մարտավարական ու ուազմավարական մակարդակներում ուազմական գործողությունների և առաջավարության սկզբունքների ու նորմերի գործածումը հեշտացնելու համար¹⁷:

Ռումինիայի Պաշտպանական ազգային համալսարանն ունի իրատա-

¹⁶ Տե՛ս «Carol I National Defence University». «Wikipedia». The free encyclopedia (http://en.wikipedia.org/wiki/Carol_I_National_Defence_University):

¹⁷ Տե՛ս «National Defence University «Carol I»» (<http://www.unap.ro/index.php/en/>):

բակչատուն, որի գործունեությունը միտված է հետևյալ պրոբլեմների օպտիմալ լուծմանը.

– ուսումնական գործընթացի ապահովում դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և այլն,

– տարրեր բնագավառների (ոազմագիտություն, ոազմարվեստ, պատմություն, աշխարհաքաղաքականություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն, սոցիոլոգիա, փիլիսոփայություն, հաղորդակցություն և հասարակայնության հետ կապեր) վերաբերյալ գրքերի խմբագրում, դրանց հրատարակում սահմանափակ կամ 500 օրինակից ավելի տպաքանակով՝ համալսարանում, Զինված ուժերում և հասարակության մեջ կատարվող գիտական հետազոտություններին և ուսումնական գործընթացին օժանդակելու նպատակով,

– ««Կարող Առաջին» այշտպանական ազգային համալսարանի տեղեկագիր» եռամսյա գիտական պարբերականի¹⁸ հրատարակում,

– կրթական և վարչարարական գործընթացների համար անհրաժեշտ ձևարդիքի տպագրություն:

Հրատարակչատունը նպաստում է գրավոր ուազմական մշակույթի զարգացմանը, մշտապես մասնակցում է գրքերի ցուցահանդեսներին և ոլորտի այլ կարևոր միջոցառումների¹⁹:

Ումինիայի ՊԱՀ-ի հրատարակչատան օրինակն ուսանելի է այն առումով, որ դրա գործունեության հիմնական նպատակներից մեկը ուսումնական գործընթացի ապահովումն է դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով: Ընդհանրապես, ցանկացած ուազմական բուհի հրատարակչական մարմնի խնդիրն է ուսումնական գործընթացի ապահովման համար հրատարակել դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ, դասախոսություններ, մեթոդական նյութեր և ուսումնամեթոդական փաստաթղթեր (ուսումնական ծրագրեր, մեթոդական ձեռնարկներ, մշակումներ, հրահանգներ և այլն), մենագրություններ, պրոֆեսորադասախոսական կազմի և ունկնդիրների գիտական աշխատությունների ժողովածուներ, գիտական, գիտագործնական և մեթոդական համաժողով-խորհրդակցութ-

¹⁸ Տես պարբերականի կայքը՝ «Buletinul Universitatii Nationale de Aparare «Carol I»» (<http://buletinul.unap.ro/>):

¹⁹ Տես «The Publishing House» (<http://www.unap.ro/index.php/en/the-publishing-house>):

յունների նյութեր, տեսական և գիտագործական տեղեկագրեր, գիտահանրամատչելի գրականություն և այլն²⁰: Նշված տպագիր արտադրանքով ուսումնական գործընթացի ապահովման խնդիր ներկայումս արդեն լուծում է ՀՀ ՊՆ ԱՌՀԲ-ի գիտահրատարակչական կենտրոնը և շատ ավելի մեծ մասշտաբներով լուծելու է ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտահրատարակչական կենտրոնի ուստի ակնկալվում է գիտահրատարակչական կենտրոնի աշխատանքի ծավալի աճում նաև այդ պատճառով:

Պետք է նշել, որ նշված ամերիկյան, ռուսական և ռումինական հրատարակչությունները կարևորում են իրենց արտադրանքի մասին ընթերցող հանրության իրազեկումը: Նշված բոլոր պարբերականներն ունեն իրենց համացանցային կայքեջերը, որտեղ տեղադրված են պարբերականների ինչպես վերջին համարները, այնպես էլ համարների էլեկտրոնային պահոցը:

Արևմտյան և ռուսական ռազմական ուսումնական հաստատությունների հրատարակչատների օրինակը նկատի ունենալով՝ կարևոր ենք համարում ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի և ՊՆ այլ ռազմառուսական հաստատությունների, ինչպես նաև ՊԱՀՀ-ի և քաղաքացիական բուհերի միջև կապերի ընդլայնումը գործադրության ոլորտում, միմյանց տեղեկացումը յուրաքանչյուր բուհի հրատարակչական արտադրանքի մասին, մասնակցությունը տպագիր արտադրանքի ցուցահանդեսներին, ինչպես նաև առավել նշանակալի հրատարակությունների շնորհանդեսների կազմակերպումը ԶԼՄ-ների մասնակցությամբ:

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-Ի ԳԻՏԱՀՐԱՏԱՐԱԿՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄԵՐԸ

Այսպիսով՝ գիտական ճանաչողության ընթացքում գիտահրատարակչական գործունեության նպատակը նոր ստեղծված գիտելիքի արձանագրումն ու հաղորդումն է: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտահրատարակչական կենտրոնի գործունեությունն ուղղված է այն իմացարանական խնդիրների լուծմանը, որոնք բխում են առաջին հերթին ռազմագիտության և պաշտպանական-անվտանգային քաղաքագիտության զարգացման օրինաչափություններից:

²⁰ Տես, օրինակ, Վ. Ղ. Կան. В помощь начинающему автору и редактору. Ташкент, 2011, с. 9 (<http://akadmvd.uz/bibl/176.pdf>):

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ը ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային ասպարեզում հանրությանը ներկայանալու է նաև իր գիտահրատարակչական կենտրոնի գործունեության արգասիքներով, ուստի դրանց որակը կլինի բուհի գիտական ներուժի և պրոֆեսորադասախոսական կազմի արհեստավարժության մակարդակի ցուցիչ: ԳՀԿ զարգացման հեռանկարյային ուղղությունները որոշվում են ՊԱՀՀ-ի առաքելությամբ, նպատակներով և խնդիրներով: ՊԱՀՀ-ի առաքելությունն է ռազմավարական պաշտպանական-անվտանգային գիտելիքների ոլորտում համատեղ միջգերատեսչական ուսուցման միջոցով նպաստել Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի Գերազույն գլխավոր հրամանատարի շուրջ միասնական գիտելիքի ու փոխհամաձայնեցված մասնագիտական գործունեության հիման վրա բարձրագույն դեկավար կազմի համախմբմանը:

Հիմք ընդունելով ՀՀ ՊՆ ԱՌՀԵ-ն ՊԱՀՀ-ի կերպավոխնելու նախագիծը և պաշտպանական-անվտանգային ոլորտում գիտահրատարակչական գործունեության միջազգային փորձի վերլուծությունը՝ կարող ենք առանձնացնել ՊԱՀՀ-ի գիտահրատարակչական կենտրոնի զարգացման հետևյալ միտումները.

— պաշտպանական-անվտանգային ոլորտում կատարվող տեսական և գիտակիրառական ռազմավարական հետազոտությունների տպագրական արգասիքների ծավալի աճում և թեմաների բազմազանեցում,

— պարբերականների թվի մեծացում և դրանց ոլորտային բազմազանության էական աճում,

— բարգանչական աշխատանքի ծավալի մեծացում և բազմազանեցում՝ ազգային պաշտպանական-անվտանգային կրթության և հետազոտությունների ոլորտ արտերկրի առաջադիմական փորձագիտական ներուժի ներբերման, ինչպես նաև միջազգային գիտական ասպարեզում հայրենական (ՊԱՀՀ-ի) մասնագետների հետազոտությունների արգավիքների ներկայացման նպատակով,

— տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և ռազմավարական խաղերի բնագավառների, անվտանգային քաղաքագիտության այլ ոլորտների ու ճյուղերի տերմինների եռալեզու բացատրական բառարանների ստեղծում,

— ուսումնական գործընթացի ապահովում յուրաքանչյուր մասնագիտության գծով ուսումնական, ուսումնամեթոդական և գիտական գրակա-

նությամբ, այդ թվում՝ ոլորտային բարգմանաբացատրական բառարաններով,

– զիտահրատարակչական գործունեության բնագավառում զիտական հետազոտությունների կատարում, միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրում ու տեղայնացում, այդ թվում՝ արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ կապերի սերտացման, փորձի փոխանակման և որակավորման բարձրացման նպատակով գործուղումների միջոցով:

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՍԱԼԱՄՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՀՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Տ. Տ. ՔՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիլուրյունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ՊՆ աշխարհակազմի վերահսկիչ վարչության պետի տեղակալ,
Ս. Գ. ԿԵԳԻԾՅԱՆ, ՀՀ ՊՆ ԱռՀՀ-ի պետի խորհրդական-իրավաբան



Պաշտպանական ոլորտում իրագործվող բարեփոխումների շրջանակում¹ ձեռնարկված իրավական վերափոխումների կարևոր խնդիրներից էին ՀՀ պաշտպանության նախարարության գորամասերի, ուազմաբժշկական հաստատությունների, ուազմակրթական ու ուազմագիտական հաստատությունների, ինչպես նաև ՊՆ համակարգում

գործող մշակութային ու լրատվական կառույցների գործունեության օրենսդրական հիմքերի հստակեցումը, զինվորական ծառայության առանձնահատկությունների հաշվառմամբ դրանց իրավական կարգավիճակի սահմանումը²: Բանն այն է, որ ՀՀ պաշտպանության նախարարության գորամասերի, հոսպիտալային օդակի, գրքող և ստեղծվող ուազմատասունական ու ուազմագիտական հաստատությունների, նախարարության ենթակայությամբ գործող զինվորական թանգարանների, «Եռարլոր» պանթեոնի, լրատվական ծառայությունների գործունեության իրավական հիմքերը սահմանված չեն որևէ նորմատիվ իրավական ակտով: Այդ պատճառով ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի՝ նշված կարգահամերի հաստատություններն իրենց գործառույթներն իրականացնում էին

¹ Տես Ա. Նազարյան, Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բանակաշինության արդի փոլիտմ, նաև՝ Ս. Գ. Մելիքյան, Պաշտպանական բարեփոխումների իրավաբանական ապահովումը բանակաշինության համատեքստում: «Հայկական բանակ», 2008, հմ. 2–3:

² Տես ՀՀ Կառավարության 2013 թ. հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» հմ. 800-Ն որոշումը, հավելված 1, կետ 106 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2013, հմ. 44 (984).1):

առանց գործունեության հստակ կազմակերպական-իրավական տեսակի սահմանման և մի շարք դեպքերում առանց օրենքում որպես պարտադիր պայման ամրագրված լիցենզավորման, ինչը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին³:

Այսպես. ՀՀ պաշտպանության նախարարության գորամասերի կարգավիճակի շնորհական պատճենով նրանք, չունենալով պետական գրանցում, հաճախ ստիպված էին հանդես գալ որպես գործառությունագրային հիմունքներով պաշտոնի նշանակելով վարձու աշխատողների, ինչը հակասում էր քաղաքացիական գործունեությանը։ Ուստի պետք էր արագորեն կանոնակարգել Զինված ուժերի նշված կառույցների իրավական կարգավիճակն ու գործունեությունը, դրանց գործառույթները համապատասխանեցնել օրենսդրության ու որդեգրված քաղաքանության պահանջներին։

Այս խնդիրը լուծվեց «Զորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ⁴: Մասնավորապես՝ այդ օրենքի համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում ռազմատումնական ու ռազմագիտական հաստատություններ պետք է ստեղծի ՀՀ Կառավարությունը, սակայն դրանց կանոնադրության, կառուցվածքի, անձնակազմի թվաքանակի, հանձնվող (աճրացվող) գույքի, այդ թվում՝ գենքի և զինամքների կազմի, դրա օգտագործման կարգի հաստատման իրավունքը ՀՀ Կառավարությունը կարող է վերապահել ՀՀ պաշտպանության նախարարին⁵։

Նոր օրենքի ընդունմամբ օրենսդրական հիմք ձևավորվեց ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում արտասահմանյան առաջավոր փորձի հիման վրա մի այնպիսի մասնագիտացված հաստատություն ստեղծելու համար, որտեղ պաշտպանական-անվտանգային ոլորտի տարրեր գերատեսչությունների պաշտոնատար անձանց համար կրթական ծրագրերի իրականացմանը լուծվեն ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգի դեկանակար կայդերի պատրաստման և պետության ռազմաքաղաքական դեկանական պահանջման համար պաշտպանական անվտանգային ոլորտը

³ Տես «Լիցենզավորման մասին» ՀՀ 2001 թ. մայիսի 30-ի հմ. ՀՕ-193 օրենքը, հոդ. 7 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2001, հմ. 26 (158))։

⁴ Տես «Զորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» ՀՀ 2015 թ. հունիսի 22-ի հմ. ՀՕ-99 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2015, հմ. 46 (1135))։

⁵ Տես նույն տեղում, հոդ. 6։

տում հետազոտությունների կատարման խնդիրները: Խոսքը ՀՀ պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայքին անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կերպափոխմամբ ՀՀ պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ստեղծման մասին է:

ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի մոդելի տեղայնացմամբ Հայաստանում Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան հիմնելու գաղափարը և նախագիծը՝ որպես գիտափորձ, հղացել է գեներալ-մայոր, քաղաքական գիտությունների դրվագը, այդինքը Հայկ Քորթանջյանը՝ ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանում իր ակադեմիական ստաժավորման ժամանակ⁶: Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի նպատակներն են պիտույքան ռազմաքաղաքական դեկավարության համար պաշտպանական-անվտանգային ռազմավարական հետազոտությունների կատարումը և ռազմավարական որոշումներ կայացնող ապագա դեկավարների կրթությունն ու վերապատրաստումը:

Այսպիսով՝ «Չորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը հնարավորություն տվեց ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում ստեղծելու մի հիմնարկ, որը, լինելով պետական լիսազոր մարմնի կազմում, դրա հետ մեկտեղ, ունենա և՝ զինվորական հաստատության կարգավիճակ, և՝ արդյունավետ գիտակրթական գործունեության համար անհրաժեշտ ձկունություն և ազատությունների լայն շրջան:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս ձևավորվել է գիտակրթական հաստատություններին հիմնադրամի իրավական կարգավիճակ տալու պրակտիկա: Սակայն նման մոտեցումը, մեր կարծիքով, այնքան էլ արդարացված չէ. օրենսդիրը «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքն ընդունելիս նկատի չի ունեցել, որ գիտակրթական հաստատությունները կարող են գործել հիմնադրամների կարգավիճակով, և «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքը նախատեսված է եղել հենց հիմնադրամներին բնորոշ խնդիրներն ու գործառույթները կարգավորելու համար, իսկ դրանք էապես տարբերվում են գիտակրթական հաստատությունների խնդիրներից ու գործառույթներից⁷:

⁶ Տես Հ. Քորանջյան, Պաշտպանական կրթության բարեփոխմամբ՝ ռազմավարական փոփոխությունների կառավարումը Հայաստանում «խելացի ուժի» զարգացման տեսանկյունից: «Աշխատանքային տեսրեր», 2012, հմ. 4:

⁷ Տես «Հիմնադրամների մասին» ՀՀ 2002 թ. դեկտեմբերի 26-ի հմ. ՀՕ-516-Ն օրենքը, հոդ. 3 («ՀՀ պաշտպանական տեղեկագիր», 2003, հմ. 9 (244)):

Նման տարիմաստությունից խուսափելու նպատակով որոշվեց ընդօրինակել արևնտյան առաջատար համալսարանների, այդ թվում՝ ԱՄՆ-ի ՊԱՀ-ի, որոշ կազմակերպարքավական տարրեր, այն է՝ ՀՀ պաշտպանության նախարարության հանձնարարություն ստեղծվող «Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանը» պետք է ունենա պետական հիմնարկի կազմակերպարքավական ձև, իսկ դրա ֆինանսական ճկունությունն ապահովելու համար ստեղծել նաև «Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի գիտակրթական գործունեությանը աջակցող» հիմնարքամբ: Մրանց նախատիպերն են ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանը և նրա հիմնադրամը:

Եվ այսպես. ՀՀ ՊՆ «Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան» պետական հիմնարկը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հաստատություն է, որը կոչված է՝ ՀՀ պաշտպանական-անվտանգային ոլորտում իրականացնելու ռազմավարական գիտատեսական ու գիտակիրառական հետազոտական գործունեություն, բարձրագույն, հետքուհական մասնագիտական և լրացուցիչ կրթություն, կատարելու գիտահրատարակչական աշխատանքներ: Նախատեսվում է, որ միանական գիտելիքի ու փոխհամաձայնեցված մասնագիտական գործունեության հիման վրա բարձրագույն մագիստրոսական և լրացուցիչ կրթության ծրագրերի իրականացման, ինչպես նաև առաջավոր միջազգային փորձի ներքերման միջոցով ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում պատրաստվելու է արհեստավարժ գիտագործնական կադրային ներուժ, ՀՀ Զինված ուժերի Գերազույն գիսավոր իրամանատարի շուրջ համախմբվելու է՝ ՀՀ պետական հանձնարարություն կազմը, պաշտպանական-անվտանգային ոլորտում ռազմավարական հետազոտությունների կատարմանը ապահովվելու և ռազմավարական ոռոշումների ընդունման (անվտանգային միջավայրի ճշգրիտ գնահատման, արդի մարտահրավերների ու հնարավոր աշխարհաքաղաքական զարգացումների կանխատեսման) գիտական հենքը: Միևնույն ժամանակ, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանն իր հիմնադրամով կարող է դառնալ նախատիպ և կազմակերպարքավական առումով օրինակ՝ հանրապետությունում ստեղծվելիք հետազոտական համալսարանների համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-Ի ՍՏԵՂԾՄԱՆ ՔԱՅԼԵՐԻ
ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ*

Հնդունված է 2015 թվականի հունիսի 22-ին

ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԵՎ ԶԲԽՎՈՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գորամասերի, ուղղմաբժշկական, ուղղմագիտական, մշակութային և լրատվական բնույթի գինվորական հաստատությունների ստեղծման, գործունեության իրականացման, դրանց իրավական վիճակի հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքի հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **գորամաս՝** Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պետական հիմնարկի կարգավիճակ ունեցող զինվորական մարմին՝ գորամիավորում, միավորում, առանձին զինվորական կառույց, որի գործունեության նպատակն է խաղաղ ժամանակ մարտական պատրաստականության և մարտական հերթապահության խնդիրների, մարտական պատրաստության, ինչպես նաև օրենքով սահմանված այլ գործառույթների իրականացման միջոցով երաշխավորել, իսկ պատերազմի ժամանակ մարտական կիրառման միջոցով ապահովել Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությունը.

* «Զորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» ՀՀ 2015 թվականի հունիսի 22-ի հմ. ՀՕ-99 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2015, հմ. 46 (1135), <http://www.arlis.am/>):

2) **զինվորական հաստատություն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պետական հիմնարկի կարգավիճակ ունեցող ռազմաբժշկական, ռազմատարրության (ռազմագիտական) կամ մշակութային կամ լրատվական բնույթի գործունեություն իրականացնող զինվորական մարմին, որի գործունեության նպատակն է ապահովել օրենքով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համապատասխան խնդիրների և գործառությների իրականացումը։ Զինվորականհաստատությունների ռազմական բնույթի արտահայտվում է դրանցում զինվորական ծառայության կազմակերպմամբ, դրանց նկատմամբ օպերատիվ-մարտավարական խնդիրների առաջադրման հնարավորությամբ։**

3) **գորամասի իրական անվանում՝ գորամասի տեսակը և գործունեության բնույթը բնորոշող տեղեկություն։**

4) **գորամասի պայմանական համար՝ գորամասին տրվող թվերի հաջորդականություն։**

Գ Լ ՈՒ Խ 2

ԶՈՐԱՄԱՍԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 3. Գորամասի ստեղծումը

1. Զորամասը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով։

2. Զորամասի ստեղծման հրամանով հաստատվում են զորամասի՝

1) իրական անվանումը և պայմանական համարը.

2) տեղաբաշխման վայրը.

3) գործունեության խնդիրները, նպատակները և գործառությները.

4) կանոնադրությունը.

5) կառուցվածքը, թվաքանակը, հանձնվող (ամրացվող) գույքի, այդ թվում՝ գենքի և ռազմամքերքի կազմը, դրա օգտագործման կարգը.

6) գործունեության հետ կապված՝ սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված այլ նորմեր։

3. Զորամասի ստեղծման վերաբերյալ տեղեկություններն օրենքով սահմանված կարգով կարող են համարվել պետական գաղտնիք։

Հոդված 4. Զորամասի գործունեությունը և իրավական վիճակի առանձնահատկությունները

1. Զորամասի գործունեության իրավական հիմքն են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը և այլ օրենքները, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերը և կարգադրությունները, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանները:

2. Զորամասում զինվորական կամ պետական այլ ծառայություն անցնելու, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունները սահմանվում են օրենքներով և այլ իրավական ակտերով:

3. Զորամասի գունվելու վայրը նրա մշտական տեղաբաշխնան վայրն է:

4. Զորամասն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և զորամասի պայմանական համարով կլոր կնիք, կարող է ունենալ զորամասի պայմանական համարով ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Զորամասն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

5. Զորամասի գույքը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից զորամասին հանձնված (ամրացված) գույքից, որը հաշվառվում է զորամասի հաշվեկշռություն:

6. Զորամասի կողմից իրեն հանձնված (ամրացված) գույքի նկատմամբ իրավունք ներառում է գույքն ինքնուրույն օգտագործելու և տիրապետելու իրավունքը: Զորամասն իրավունք չունի իրեն հանձնված (ամրացված) գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել վարձակալության կամ անհատույց օգտագործնան կամ հավատարմագրային կառավարման: Սույն մասով նախատեսված գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու սահմանափակումը չի տարածվում օրենքով սահմանված զինծառայողների հանդերձանքի ապահովության վրա:

